# Ազգ

AZG
armenian newspaper

Օգոստոս 27
1992
Հինգշաբթի

երկօրեայ թերթ
Բ տարի, թիւ 77 (169)
գինը 2 ռ.

Երեւան 375010
Հանրապետութեան 47

դասիչ 69149

հեռ. 581841, ֆաքս 562941, տելեքս 243266 CPRI SU


## Կրկին հրեւակոծվել է Կաղանը

Երեկ եւ նախօրեայ օրը իրավիճակը Կաղանի շրջանում շարունակում էր մնալ լարված: Օգոստոսի 25-ին Կաղանի եւ Ղարաբլիի շրջանների ղեկավարների միջեւ տեղի են ունեցել բանակցություններ, որոնց ընթացքում երկու շրջանների միջեւ կրակը դադարեցնելու մասին համաձայնություն է ձեռք բերվել: Պայմանավորվածությունն ընդհանուր առմամբ չի խախտվել, սակայն նույն օրը երեկոյան աղեղն Զանգելանի շրջանի Ղազանչի գյուղում տեղակայված հենակետերից ադրբեջանցիները գնդակոծել եւ հրետակոծել են Կաղան քաղաքը: Հրետակոծումը դադարել է միայն երեկ առավոտյան: Կան ավերածություններ: Փոքր տրամաչափի զինատեսակներից գնդակոծվել են նաեւ շրջանի սահմանամերձ գյուղերը: Տուժածների մասին տեղեկություններ չկան: ■

## Ադրբեջանական օդուժը հարվածում է Մարտունու գյուղերին

Ինչպես հաղորդում է Ղարաբաղի «Նորություններ» գործակալությունը, երեքշաբթի օրը ադրբեջանական Su-25 գրոհայիններ ռմբակոծել են Մարտունու շրջանի Մաճկալաշեն, Մուշկաղաս եւ Նեգի գյուղերը: Ըստ նախնական տվյալների, 9 հոգի զոհվել են եւ 10-ը վիրավորվել: Կան զգալի ավերածություններ: Հայտնվում է, որ ադրբեջանական օդուժը խաղաղ գյուղերի վրա է նետել 500 կիլոգրամանոց ռումբեր:

Ըստ նույն աղբյուրների, Մարտակերտի շրջանի Դրմբոն գյուղի մոտ շարունակվում են կռվողի մարտերը: Երեքշաբթի առավոտյան ադրբեջանական կազմավորումները նահանջել են Ալիջան գյուղի ուղղությամբ, որտեղից անընդհատ հրետակոծվում է Դրմբոն գյուղը:

Միեւնույն ժամանակ, Ադրբեջանի պաշտպանության նախարարությունից հայտնում են, որ ադրբեջանական կազմավորումները *«ժայռերի հարձակումը եւ մղելիս»* ոչնչացրել են «Գրադ» կայանք, հետեւակի մարտական մեքենա եւ «Կամազ» մակնիշի բեռնատար: Ղարաբաղի հարավում ադրբեջանցիները շարից հանել են մեկ տանկ եւ մեկ հրետանային կայանք: Նույն աղբյուրը հայտնում է, թե Լաչինի շրջանում ադրբեջանական ուժերը վերահսկեցել են հսկողությունը Սուարասի եւ Խանալար գյուղերի վրա: Գետաբեկի շրջանում ադրբեջանցիներին իբր հաջողվել է եւ մղել հայերին, որոնք մինչ այդ գրավել էին այդ շրջանի Նովո Իվանովկա գյուղի մերձակայքի մի հատված: ■

## Հայաստանը կողմ է Ղազախստանի նախաձեռնությանը

Ինչպես հայտնի է, օգոստոսի 24-ին Ղազախստանի նախագահ Նուրսուլթան Նազարբաեւը հեռախոսագրույց է ունեցել Հայաստանի նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի եւ Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյի հետ, որի ժամանակ ննջարկվել է Ղարաբաղում ստեղծված իրավիճակը: Ղազախստանի նախագահը պատրաստակամություն է հայտնել միջնորդ հանդիսանալ հակամարտ կողմերի միջեւ եւ կոչ է արել անհապաղ նրստել բանակցությունների սեղանի շուրջ:

Ինչպես «ԻՖ»-ին հաղորդեցին Հայաստանի նախագահի մամուլի ծառայությունում, Հայաստանն աջակցել է Նուրսուլթան Նազարբաեւի միջնորդական նախաձեռնությանը: Նա առաջարկել էր Ալմա-Աթայում անցկացնել Ղազախստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի արտգործնախարարների հանդիպումը Ղարաբաղյան հիմնախնդիրը ննջարկելու համար:

Օգոստոսի 25-ին Մոսկվա է մեկնել Հայաստանի պատվիրակությունը Բաֆֆի Հովհաննիսյանի գլխավորությամբ: Ալմա-Աթա ժամանելուց անմիջապես հետո Բ. Հովհաննիսյանը հանդիպում կունենա Ղազախստանի արտգործնախարար Տուլեսայ Սուլեյմենովի հետ, իսկ հետո նախատեսվում է եռակողմ հանդիպումը: Բանակցությունների մասնակիցներին կընդունի Նուրսուլթան Նազարբաեւը:

Երեկ Ալմա-Աթա ժամանած Ադրբեջանի արտգործնախարար Թոֆիկ Ղասիմովը հանդիպում է ունեցել Ղազախստանի արտգործնախարար Սուլեյմենովի հետ, որը նրան ծանոթացրել է Ղարաբաղում կրակը դադարեցնելու վերաբերյալ նախագահ Նազարբաեւի առաջարկություններին: ■

# Մարիո Ռաֆաելլին Երեւանում առաջարկել է 60-օրյա հրադադար

*Ղարաբաղյան կողմը տարակուսանք է հայտնում*

ԵԱՀԽ-ի շրջանակներում Լեռնային Ղարաբաղին նվիրված Մինսկի միջազգային խորհրդաժողովի նախագահ Մարիո Ռաֆաելլին օգոստոսի 25-ին ժամանեց Երեւան: Նույն օրը երեկոյան նա հանդիպում ունեցավ Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի Հովհաննիսյանի հետ: Թեեւ նախատեսվում էր նրա հանդիպումը նաեւ ԼՂՀ Գերագույն խորհրդի նախագահի պատասխանատու Գեորգի Պետրոսյանի հետ, սակայն վերջինս այս լարված իրավիճակում հնարավոր չգտավ իր ժամանումը Երեւան, որի մասին տեղեկացրեց հեռագրով: Օգոստոսի 26-ին կայացավ Ռաֆաելլիի հանդիպումը Հայաստանում ԼՂՀ-ի ներկայացուցիչ Մանվել Սարգսյանի հետ: Վերջինս հանդիպումից հետո «Սնարֆ»-ի թղթակցին ասաց. *«ԵԱՀԽ-ն ամենայն հախանկանությամբ նախատեսում է Ղարաբաղում ռազմական գործողությունների դադարեցման հասնել նախքան հակամարտության մասնակից կողմերի միջեւ նախնական համաձայնության գալը»:* Մ. Սարգսյանը Ռաֆաելլիի նման մատուցությունների արդյունավետությունը խիստ ցածր գնահատեց: Նա տարակուսանք հայտնեց, որ ռազմական գործողությունների դադարեցման կաղակցությամբ իր համաձայնությունը ոլիտի տա նաեւ Լեռնային Ղարաբաղի ադրբեջանական փոքրամասնության ներկայացուցիչը, որը այս պատերազմում ուղղակի բացակայում է: Նա մեջ բերեց հանդիպման մասնակիցների եզրակացությունը, որ շրջանում ռազմական գործողությունների դադարեցումը լավ հիմք կծառայի Ղարաբաղյան հակամարտության հետագա կարգավորման համար:

Օգոստոսի 26-ին կայացավ Ռաֆաելլիի հանդիպումը Հայաստանի նախագահի հետ: Ռաֆաելլին կրկնեց 60-օրյա հրադադարի մասին առաջարկը: Տեր-Պետրոսյանը բարձր գնահատեց այն, սակայն ափսոսանք հայտնեց, որ ԵԱՀԽ-ում բացակայում են նման նախաձեռնությունների իրականացման մեխանիզմները: Նախագահը նշեց, որ Երեւանը Ղարաբաղյան հակամարտությունը դիտում է որպես բացառապես երկու պետություններին եւ ԼՂՀ-ին վերաբերող հարց: Ուսի խնդրի կարգավորման նպատակով վերջիններս պետք է բանակցություններ վարեն: Խոսելով Հայաստանի ու Ադրբեջանի միջեւ հրադադարի մասին՝ նախագահը նշեց, որ Հայաստանը նկատի ունի բացառապես հայ-ադրբեջանական սահմանը:

Ռաֆաելլին նույն օրը հանդիպեց Արծվաշենից բռնագաղթվածների հետ, մասնակցեց նաեւ կանանց խորհրդում կազմակերպված հանդիպմանը, որին ներկա էին մայրաքաղաքի մտավորականության ներկայացուցիչներ:

Հիշեցնենք, որ Մարիո Ռաֆաելլին Երեւան է ժամանել Բաքվից, որտեղ փակ դռների ետեւում հանդիպում էր ունեցել Ադրբեջանի նախագահի եւ արտգործնախարարի հետ: Հանդիպման ժամանակ իտալացի դիվանագետը նույնպես ներկայացրել էր կոնֆլիկտի մասնակից բոլոր կողմերի՝ 60 օրով հրադադար հայտարարելու առաջարկը: Այնուամենայնիվ, հանդիպման ժամանակ ադրբեջանական կողմը հայտարարել էր, որ թեեւ Բաքուն պատրաստ է երկկողմանի հրադադարի, սակայն դա դեռ չի նշանակում, թե Ադրբեջանը կմասնակցի Մինսկի խորհրդաժողովին: Որպես իր մասնակցության նախադայման Ադրբեջանն առաջ էր քաշել հայերի կողմից Շուշին եւ Լաչինը վերադարձնելու, ինչպես նաեւ հայկական զորքերը Ղարաբաղից դուրս բերելու պահանջը:

Մնում է ավելացնել միայն, որ երեկ, ժամը 3-ին Ռաֆաելլին Իտալիա թռչելու համար մեկնել է Թուրքիա, ինչպես վստահեցրին Հայաստանի ներքգործնախարարությունից, միայն ու միայն հանրապետությունում վառելիք չլինելու պատճառով: ■

## ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովը կտրուկ միջոցների կողմ

ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովն ընդունել է մի բանաձեւ, որը Անվտանգության խորհրդից պահանջում է առավել կտրուկ միջոցներ կիրառել Բոսնիայում ռազմական գործողությունները դադարեցնելու համար: Բրյուսելում ՆԱՏՕ-ին չհաջողվեց համաձայնության հասնել ռազմական միջոցների կիրառման հարցում՝ մարդասիրական առաքելությունների անվտանգությունն ապահովելու համար: Լոնդոնում կայանալիք ՄԱԿ-եւրահամայնք խաղաղարար բանակցությունների նախօրյակին Լորդ Քարինգթոնը հրաժարվեց ճգնաժամի դադարեցման գործընթացում եւրահամայնքի գլխավոր միջնորդի իր պաշտոնից: ■

## Բաղդադը երկրի հարավից հեռ է քաշել իր օդուժը

Ըստ Պենտագոնի հայտարարության, Բաղդադն ըստ երեւույթին արդեն հարավային Իրաքից հեռացրել է բոլոր ռազմական օդանավերն ու մարտական ուղղաթիռների մի մասը: Դա պետք է արվեր ի պատասխան արեւմտյան տերությունների սպառնալիքի՝ խփել այդ շրջանի վրայով թռչող օդանավերը: Նրանք պատրաստվում էին «ոչ թռիչքային գոտու» մասին վերջնագիր ներկայացնել Իրաքին, եթե վերջինս շարունակեր շիա մուսուլմանների վրա իր հարձակումները: ■

## Լիբանանի նախագահը ելք է որոնում ճգնաժամից

Լիբանանի նախագահ Հրաուին հանդիպել է իր կաբինետի հետ, փորձելով ելք գտնել խորհրդարանական ընտրություններից ծագած ճգնաժամից, որը սպառնում է խափանել 1975-90 թթ. քաղաքացիական պատերազմին վերջ տված հավասարակշռությունը: Կիրակի օրն անցկացված ընտրությունների առաջին փուլը, որի ժամանակ արմատականներն առավելության հասան, սկիզբ տվեցին խարդախության մեղադրանքներին, ինչը հանգեցրեց խորհրդարանի խոսնակի հրաժարականին: ■

## Ելցինը քայլեր է անում կայունացնելու իրավիճակը Կովկասում

Ինչպես երեկ հաղորդեց Ռուսաստանի նախագահի քարտուղար Վլադիսլավ Կուսիկովը, սեպտեմբերի 3-ին Մոսկվայում տեղի կունենա Բորիս Ելցինի եւ Էդուարդ Շեւարդնաձեի հանդիպումը Աբխազիայի եւ Հյուսիս-կովկասյան հանրապետությունների ղեկավարների մասնակցությամբ: Ինչպես հայտնի է, Բորիս Ելցինը կոչ է արել Վրաստանի եւ Աբխազիայի ղեկավարներին՝ դադարեցնել ռազմական գործողությունները: Նա խոստացել է ձեռնարկել *«բոլոր միջոցները Վրաստանում զինված ջոկատների ներխուժումը կանխելու համար»:*

Երեկ Ռուսաստանի ղեկավարը դիմել է նաեւ Հյուսիսային Կովկասի եւ Ռուսաստանի հարավի բնակչությանը եւ մտահոգություն հայտնել, որ Վրաստանի եւ Աբխազիայի միջեւ հակամարտությունն սպառնում է շրջանում բնակվող հազարավոր ռուսաստանցիների կյանքին: Նա կոչ է արել շրջանի ժողովուրդներին «զսպել հույզերը» եւ չենթարկվել սադրիչ կոչերի: ■

## Պետխորհրդի վերջնագիրը չի գործադրվել

Ինչպես երեկ հաղորդեցին Սուխումից, Աբխազիայի ղեկավարությանը Վրաստանի զինված ուժերի հրամանատարության ներկայացրած վերջնագրի ժամկետը լրանալուց հետո այն իրականացնելու համար ոչ մի գործողություններ չի ծավալել: Սպասվում է հարձակում Գուդաուտայի վրա, որ աղասան է գտել Աբխազիայի խորհրդարանի նախագահ Վլադիսլավ Արձինբան իր կողմնակիցների հետ: Սակայն վրացական բանակի հիմնական ուժերը մնացել են նախկին դիրքերում:

Պետխորհրդի ամսուի կենտրոնում այդ հանգամանքը բացատրում են նրանով, որ Էդուարդ Շեւարդնաձեն դիմել է Արձինբային՝ անհապաղ սկսել բանակցությունները: Երեկ Վրաստանի ղեկավարը հայտնեց, որ Արձինբային հրավիրել է Թբիլիսի՝ երաշխավորելով նրա անվտանգությունը: Շեւարդնաձեն կրկին կոչ արտահայտվեց, որպեսզի Սուխումում որեւ հնարավոր է արագ գումարվի Աբխազիայի Գերագույն խորհրդի նիստ:

Գագրայում, որտեղ օգոստոսի լույս 26-ի գիշերը եւ առավոտյան մարտեր էին տեղի ունենում հարձակման անցած աբխազական ուժերի եւ վրացական զորքերի միջեւ, կեսօրից հետո համեմատական անդորր է հաստատվել: Վրացական կողմը ճշտեց, որ օգոստոսի 25-26-ի մարտերի ընթացքում զոհվել է չորս եւ վիրավորվել 15 մարդ: Աբխազական կողմից զոհվել է 39 եւ վիրավորվել մոտ 60 մարդ: ■

## Մահափորձ Վրաստանի փոխվարչապետի դեմ

Վրաստանի ՆԳՆ-ը հաղորդեց, որ օգոստոսի 26-ին մահափորձ է ձեռնարկվել Վրաստանի փոխվարչապետ Կոգոուաշվիլու դեմ: Առավոտյան հարեւանը դայրուցիկ սարք է հայտնաբերել նրա բնակարանի դռան վրա, որը պետք է պայթեր դուռը բացելու պահին: Բարեբախտաբար, փոխվարչապետը գտնվում էր ամառանոցում, եւ բնակարանում ոչ ոք չի եղել: Կոգուաշվիլին օրերս է նշանակվել Վրաստանի փոխվարչապետ: Մինչ այդ նա եղել է հողային բարեփոխումների եւ հողային պաշարների պետական կոմիտեի նախագահ: ■

## Ավելի շատ տնտեսական, քան ռազմական հարցեր

Ջորջ Բուշն ու Բիլլ Քլինթոնը Չիկագոյում հանդիպում ունեցան Ամերիկյան լեգեոնի հետ: Հանդիպման ընթացքում որոշ վեճեր հայտարարեցին, որ իրենց ավելի շատ մտահոգում են տնտեսական, քան ռազմական հարցերը: Բուշը զգուշացրեց, որ, չնայած Խ. Միության կործանմանը, արտաքին աշխարհը դեռ շատ վտանգներ է պարունակում: Քլինթոնն ասաց, որ ազգային անվտանգության քաղաքականությունը պիտի օժանդակվի ինչպես ռազմական, այնպես էլ տնտեսական հզորությամբ: ■

## ԿՀՎ-ի նախկին տրան անհետացել է

Շվեդիայում բանտարկված ԿՀՎ-ի նախկին տրա, քառասնամյա Էդուարդ Հոուարդն ազատ արձակվելուց հետո հեռացել է երկրից անհայտ ուղղությամբ: Հոուարդին փնտրում են ԱՄՆ-ի իշխանությունները, որոնք նրան ամերիկյան գաղտնիքները ԽՍՀՄ-ին վաճառելու մեղադրանք են ներկայացնում: Արդարադատության վարչության պաշտոնյաները խոստացել են հետաքննել նրան արտաստմանում: ■

digitised by A.R.A.R.@

# Հայրենիքը ամենակարող չէ

*Փախստականները ծանր վիճակում են, նրանց անհապաղ օգնություն է պետք*

Բարձրանում եմ Երևանից Արովյան մեկնող թիվ 110 ավտոբուսը եւ մի կերով ոտքի տեղ անում: Ավտոբուսը լիքն է հոգնած, ցնցոտիների մեջ կորած, մաշ-մորուքի մեջ թաղված մարդկանցով: Տոմսավաճառը նրանցից ողեվարած է պահանջում: Դողացող շուրթերով, անհարմարությունից կարկամող ձայնով նրանք շրջապատի համար անլսելի ինչ-որ բան են ասում: Լսվում է կապադոկ տոմսավաճառի բղավոցը:

– Կրակն ենք ընկել, փող չունեք, ավտոբուս մի նստեք, զզվացրել եք էս քրոնս շահումյանցիք:

Նայում եմ այդ դժբախտ մարդկանց գունատված կամ ամոթից կապ-կարմիր կտրած դեմքերին, ու վրդովմունքն ածում է մեջս: Որտեղի՞ց մեր ժողովրդին այսքան չարություն ու դաժանություն: Մի՞թե կյանքի դժվարությունները դուրս են մղել մարդկայնությունը, բարությունը, կարեկցանքը, խիղճը:

Մոտենում եմ վերջին նստարանին գլխահակ նստած ծերունուն, որից մեր հին հայկական գյուղերի համն ու հոտն եմ առնում: Շահումյանի Վերիշեն գյուղից է, որդին՝ Հայկ Շելունցը, այս տարվա սկզբին զոհվել է հինգ որբերի թողնելով ծերունի հոր խնամին: Օգնություն ստացե՞լ է, թե ոչ. ծերունին եղվում է, որ ոչ մի էական օգնություն չի ստացել, չգիտի որբերին ինչպե՞ս է պահելու, ուժերը սպառված են ու տարիքն էլ առաջացած, խեղճ հարսը հինգ ուսող բերան ինչպե՞ս պիտի կերակրի:

Փախստականների հարցերով պետական վարչության շենքը շրջապատած մարդիկ հիմնականում շահումյանցիներ են, որոնք արդեն երկու ամիս է, ինչ Հայաստանում են՝ առողջարաններում, հյուրանոցներում, գիշերօթիկներում, դպրոցներում, հանրակացարաններում: Կառավարությունը որոշում է ընդունել նրանց երեք ամսով տեղավորելու մասին:

Բակում հավաքվածները այնքան ասելու եւ պատմելու բան ունեն, որ կարելի է շաբաթներ շարունակ լսել. լսել ու խենթանալ, լսել ու զարմանալ՝ ո՞րն է մարդու դիմացկունության սահմանը, ինչքա՞ն դժբախտություն է նա ի զորու տանել իր թույլ ուսերին:

Սակայն վիճակն ու անասելի դժվարությունները մարդկանց ողջամտությունից չեն զրկել: Նրանք առաջադրում են բազում հարցեր ու պահանջներ, որոնց անհրաժեշտ է պատասխանել: Նրանք հարցնում են՝ ո՞ւր գնաց Հայաստանից ու արտասահմանից ԼՂՀ ուղարկվող օգնությունը, ինչո՞ւ իրենք դրանից ոչինչ չեն ստացել: Մինչեւ ե՞րբ պիտի ապրեն գիշերօթիկներում, հանգստյան տներում, հարազատների մոտ: Ինչո՞ւ Հայաստանում իրենց աշխատանքի չեն ընդունում, չէ՞ որ իրենք մոտ երկու տարի Շահումյանում աշխատավարձ չէին ստանում: Ի՞նչ նպատակների է ծառայում Շահումյան-Գեղաշեն հիմնադրամը եւ այլն, եւ այլն:

Զրուցակիցներից մեկը՝ զինվորական արտահագուստով մի միջահասակ տղամարդ, պատերազմ է Ղարաշինարի առաջին ջոկատի հրամանատար Բենիկ Սարգսյանն է: Բենիկի ջոկատը մինչեւ 205 մարտիկ է ունեցել: Նրանք ընդհարումների ժամանակ երկու զոհ են տվել (զոհվել է նաեւ Բենիկի 12-ամյա որդին): Վերջին մարտերից 33 հոգանոց ջոկատը ժողովրդին հասցրել է Հաթերք, ապա՝ ոտքով՝ Հայաստան: Նրանք երկու ամիս է Հայաստանում են: Բերել են իրենց ընտանիքները ապահով ձեռքերում թողնելու, ապա վերադառնալու նպատակով: Մինչեւ բերելը փորձել են Շուշում տեղավորվել, որտեղ, իրենց խոսքերով, բնակության համար ֆիզ թե շատ պիտանի տները վաղուց զբաղեցրել են հիմնականում ստեփանակերտցիները: Նրանք հուզված պատմում էին իրենց զոհված ընկերոջ՝ Յուրա Հակոբյանի մասին, որի երեք զավակները բախի ճմահածույին են հանձնված: Պատմում էին ու արդարացիորեն հարց տալիս՝ ի՞նչ պետական ուշադրություն է նվիրվում զոհվածների ընտանիքներին, ի՞նչ խղճով իրենք թողնեն ընտանիքները, ո՞ւմ հույսին: Սակայն, միեւնույն է, իրենց հայրենի հողն է կանչում, տմացած հայտարարում էին նրանք ու ավելացնում՝ Շահումյանի մի բուռ հողը ամբողջ աշխարհի հետ չենք փոխի:

Մի քանի քայլ այն կողմ կանայք էին հավաքված: Շահումյանի հիվանդանոցի բուժքույրերն էին, որ մինչեւ վերջին վայրկյանն անգամ լաղտերի լույսի տակ վիրավորներին օգնություն են ցույց տվել, մի մասը չի հասցրել գոնե տուն մտնել, փախել են հիվանդանոցային խալաթներով: Տեղավորվել են Քանաքեռի գիշերօթիկ դպրոցում, գոհ են կառավարությունից ու դպրոցի տնօրենից ընդունելության եւ անվճար ուրեխանգամյա սննդի համար: Սակայն միայն այդքանը. այնքան շատ հոգսեր, հարցեր ու մտահոգություններ ունեն, որ չգիտեն որն ասեն, որը թողնեն: Դժգոհեցին, որ մեկ տարի կլինի, ինչ աշխատավարձ չեն ստացել, ոչ մի իր չեն կարողացել հետները վերցնել՝ անգամ սեւ օրվա համար պահած ոսկեղենը: Իսկ մինչեւ դեղերի սրվելը նույնիսկ հղի կանանց չեն կարողացել ողջամիտներով դուրս բերել, դրանք ծառայել են տեղի պաշտոնյաների ունեցվածքը աղտոտով Հայաստան հասցնելուն: Ծայրահեղ ծանր նյութական կացության մեջ հայտնված բուժքույրերը, որոնցից շատերը մեկ ռուբլի անգամ չունեին գրպաններում, պատմեցին, որ փորձել են աշխատանքի տեղավորվել երգչաններում անգամ որպես տեխնիկական աշխատող, բայց մերժվել են: Որոշ տեղերում նրանց երեսին ողողակի նետել են՝ մեզ փախստականներ պետք չեն:

Իսկ ի՞նչ է կատարվում վարչության պատերի ներսում: Այստեղ աշխատելու խելագար ռիթմ է. բազում ընթացիկ, անհատական հարցերի լուծումը, պետական մակարդակով կատարվող աշխատանքը ոչ մի ազատ րոպե չեն թողնում:

Բռնագաղթվածների 30 հազար ընտանիք չունեն մշտական բնակության վայր: Նրանց մի մասը հնարավորություն չունի սեփական միջոցներով շինարարություն իրականացնելու: Չէ՞ որ նրանցից շատերը, հատկապես վերջին երջանում գաղթածները, գրեթե ոչինչ չեն կարողացել փրկել, բացի սեփական եւ զավակների կյանքից, թեեւ խնայբանկերում թողել են 12 մլն ռուբլու ավանդներ, ապահովագրական մեծ գումարներ: Նրանք այսօր ոչ միայն նյութական, այլեւ ֆիզիկական, բարոյական աջակցության կարիք են զգում: Սակայն Հայաստանի բանկերը վարկ տրամադրելու հնարավորություն չունեն: Ուրեմն ի՞նչ անել, ինչպե՞ս կառուցել բնակարաններ, գոյք ու հագուստ գնել, գոյից տանտեղ դնել, առօրյա հոգսերն ու ծախսերը հոգալ գների նման վերելքի պայմաններում:

Մոտենում է ծմեռը: Վարչությունը նախատեսում է առողջարաններում, հանգստյան տներում վառելիքի, սննդի եւ այլ հարակից հարցեր լուծելուց հետո տեղերում կազմակերպել ծմեռումը: Զբաղվում են նաեւ ծերերին, հատկապես միայնակներին հանրակացարաններում կամ ծերանոցներում տեղավորելու հարցով: Բոլոր աշխատանքների, ծրագրերի իրականացումը ի վերջո հանգում է նյութական հատկացումների աղբյուրի հարցին: 1992 թ. առաջին կիսամյակում կառավարությունը վարչությանը հատկացրել է 4,5 մլն. ռ., իսկ երկրորդ կիսամյակում նախատեսվում է 25 մլն ռուբլի:

Երբ անդրադառնանք վիճակագրությանը՝ 350 հազար առաջին շրջանի փախստականներին ավելացել են 5000-ը Մարտունաշենից ու Գետաշենից, ապա 13 հազարը Շահումյանից եւ վերջին հոսքը 40 հազար մարտակերտցիներն էին (դարաբաղցիների հարցերով Հայաստանում չեն զբաղվում, այլ Ստեփանակերտում ստեղծված վարչությունն է տնօրինում): Միակ շոշափելի օգնությունը՝ վերջին օրերին որոշում է ընդունվել 2 ամսով վճարել մանուկների նպաստներն ու կենսաթոշակները: Մեկ անգամ անվճար կազմակերպվում է մեկնումը որեւէ շրջան: Գիշերօթիկներում, հանգստյան տներում տեղավորվածները օրական երեք անգամ անվճար սնվում են, որոշ տեղերում արտասահմանյան օգնություն (ձեր, լոքի, կաթի փոշի) են ստացել: Սակայն տեղական օգնությունն ու ժողովրդական բարեգործությունը խիստ նվազել են, երեւի ժողովուրդն ինքն էլ բան չունի ուտելու:

Վարչությունը համառոտ տեղեկանք է կազմել մի շարք կարիքների մասին, տասնյակ միլիոնների սընունդ է պետք, հագուստ, կոշիկ, հազարավոր վրաններ, անկողին:

Այս եւ մնացած բոլոր հարցերի լուծումը խիստ կհետեւանա, եթե Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը վերջապես ընդունի փախստականի կարգավիճակի մասին օրենքը: Օրենքի նախագիծը մեկ անգամ լսվել է Գերագույն խորհրդում, հետաձգվել մինչեւ տեղական ինքնակառավարման մասին, քաղաքացիության մասին օրենքների ընդունումը, նոր անձնագրային կարգի հաստատումը:

Իսկ առայժմ փախստականի ճակատագրին առնչվող գրեթե բոլոր խնդիրների լուծումը դրված է փախստականների հարցերով պետական վարչության անձնակազմի վրա, հանձնված նրանց բանիմացությանն ու մարդկայնությանը, նրանց համառությանն ու գործին նվիրվածությանը: Եւ այդ արժանիքներից անգամ մեկի անկատար լինելու դեպքում փախստականների բազմահազարանոց զանգվածի մեջ վտանգավոր խմորումներն ու դժգոհությունը պայթյունավտանգ իրադրություն կստեղծեն: Նման իրադրության ստեղծումը կանխելու համար փախստականների հետ տարվող պետական քաղաքականությունը հեռահար ելման կարիք ունի:

ԱՐՄԻՆԵ ՕՀԱՆՅԱՆ

## Բուժօգնությունը կարգավորված է

ՀՀ առողջապահության նախարարությունից հայտնում են, որ տեղական իշխանությունների ակտիվ օգնությամբ արդեն ավարտվել են սահմանամերձ երջանների բնակչությանը մշտական բուժօգնություն ցույց տալու աշխատանքները: Այսպես, Գորիսում, օգոստոսի 20-ի հրետակոծումից հիվանդանոցի շենքի վնասվելուց հետո, բացվել է լրացուցիչ վիրաբուժական բաժանմունք, որը գործում է համեմատաբար ապահով վայրում: Նախատեսվում է նաեւ սարքավորել նկուղային վիրահատարան: Կապանում ավարտվել են պահեստային հիվանդանոցի կազմակերպման աշխատանքները: Այն կարող է գործել հիվանդանոցի հիմնական շենքի վնասվելու դեպքում: Օգոստոսի 16-ի հրետակոծումից վնասվել էր Մեղրու կենտրոնական երջանային հիվանդանոցը: Այն այժմ գործում է Ագարակ ավանում: Ագարակում եւ Մեղրիում կահավորվում են նաեւ նկուղային վիրահատարաններ: ■

## Արտակարգ իրավիճակ եւս երկու երջաններում

Ադրբեջանի նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը հրամանագիր է ստորագրել մեկ ամսով Ֆիզուլու եւ Ջեբրայիլի երջաններում արտակարգ դրություն մտցնելու մասին: Ինչպես հաղորդեցին «ԻՖ»-ին նախագահի մամուլի ծառայությունում, այդ քայլը պայմանավորված է նրանով, որ վերջերս այդ երջանները *«ենթարկվել են ուժգին հրետակոծման, ինչը սպառնում է խաղաղ բնակիչների կյանքին»:* Արտակարգ իրավիճակ մտցնելու նպատակն է նաեւ առահովել գյուղատնտեսական աշխատանքների անցկացման անվտանգությունը: Ա. Էլչիբեյի հրամանագիրը հանձնվել է Ադրբեջանի միլլի մեջլիս՝ հաստատման համար: ■

## Ռուսաստանցի սպաները ազատ են արձակվել

Ռուսաստանի զինված ուժերի սպաները՝ կապիտաններ Միխայիլ Կուզնեցովը եւ Վալենտին Մորոզովն ազատ են արձակվել: Ինչպես հաղորդեցին «ԻՖ»-ին Ռուսաստանի պաշտպանության նախարարության մամուլի կենտրոնում, ադրբեջանական կողմը համոզվել է, որ «լրտեսության մեջ կասկածներն» անհիմն են: Հենց սա էր ռուսաստանցի սպաների ձերբակալման պատճառը: Ռուսաստանի պաշտպանության նախարարությունը բողոք է հայտնել Ադրբեջանի նմանատիպ գործողությունների դեմ՝ գնահատելով դրանք որպես «անթույլատրելի»: ■

## Ադրբեջանական օդուժը շարունակում է խաղաղ բնակավայրերի ռմբակոծությունները

Ինչպես հաղորդել է Ադրբեջանի պաշտպանության նախարարությունը, Լեռնային Ղարաբաղի հյուսիսում եւ հարավում մարտական գործողությունները «դիրքային բնույթ են ստացել»: Ըստ նույն աղբյուրների, օգոստոսի լույս 25-ի գիշերը հայկական կազմավորումները ներխուժել են Ադրբեջանի Ջանգելանի երջանի տարածքը եւ վառել երկու գյուղ: Ըստ չստուգված տվյալների, մի քանի բնակիչներ, հիմնականում ծերեր, իրենց տներում վառվել են: Մնացածները, որոնց մեջ եղել են նաեւ վիրավորներ, խուճապահար լքել են գյուղերը: Ըստ Ադրբեջանի պաշտպանության նախարարության տվյալների, անցած օրերի ընթացքում հայկական կազմավորումներն ուժգին հրթիռակոծման են ենթարկել Ադրբեջանի Ջանգելանի, Աղդամի, Ֆիզուլու եւ Գեսարբեկի երջանների բնակավայրերը: Կան ավերածություններ, ինչպես նաեւ զոհեր եւ վիրավորներ, որոնց թիվը ճշտվում է: Ակնհայտ է, որ այս տեղեկություններն ունեն մի նպատակ՝ արդարացնել Լեռնային Ղարաբաղի եւ Հայաստանի սահմանամերձ բնակավայրերի դեմ ռազմական օդուժի օգտագործումը: Այդ է վկայում նաեւ Ղարաբաղի «Նորություններ» գործակալության հաղորդագրությունը, ըստ որի երկուշաբթի օրը ադրբեջանական Su-25 զրոհային ինքնաթիռներն օդային հարձակում են գործել Ասկերանի երջանի Նորագյուղ եւ Խոջալու բնակավայրերի վրա, որի հետեւանքով տասը հոգի վիրավորվել է: Կան ավերածություններ: Լույս երեքշաբթի գիշերը Ֆիզուլու երջանի տարածից հեռահար հրետանային կրակով հրետակոծվել է Հադրութ երջկենտրոնը եւ նրա մերձակա էդիլլու գյուղը: Ըստ նախնական տվյալների, մեկ մարդ զոհվել է, երկուսը վիրավորվել: Երջկենտրոնում կան զգալի ավերածություններ: ■

## ԼՂՀ-ի ճանաչման հեռանկարները իրական են

*«Ես առաջվա պես գտնում եմ, որ Լեռնային Ղարաբաղի՝ որպես ինքնիշխան հանրապետության ճանաչումը իրական է»,* «Սնարֆ»-ի թղթակցի հետ զրույցի ժամանակ ասաց ԼՂՀ Գերագույն խորհրդի արտաքին կապերի մշտական հանձնաժողովի նախագահ Լեւոն Մելիք-Շահնազարյանը: Նրա կարծիքով, վաղ թե ուշ համաշխարհային հանրությունը պետք է գնահատի ԼՂՀ իշխանությունների անփոփոխ նվիրվածությունն ընդունված միջազգային իրավական նորմերին: Լ. Մելիք-Շահնազարյանն ավելացրեց, թե ինքն այդ համոզմանն է եկել Եւրախորհրդարանի, Եւրահամայնքի, ինչպես նաեւ աշխարհի մի շարք երկրների պաշտոնական անձանց հետ հանդիպումներից հետո: ■

digitised by A.R.A.R.@

# Ավելի լավ չէ՞ հացը կտրոնով

Թիվ 2 հացի գործարանի մոտ օգոստոսի 20-ին տեսա մարդկային խուռն բազմություն: Ոչ մի եզր հաղթակերության հետ. եկել էին հաղթի բոլոր ծայրերից եւ գյուղերից: Հավաքվել էին հաց գնելու կամ... փախցնելու, որովհետեւ այն, ինչ նրանք էին անում, միայն այդպես կարող եմ որակել: Դարդասից դուրս եկած մենեանա կանգնեցրին ու վարորդ-առաքիչին սպիտեցին հենց տեղում հացը վաճառել՝ այն դեռեւում, երբ գործարանի մուտքին կից հացի խանութը կես ժամը մեկ հաց է սանում: Դրանով էլ չբավարարվեցին, հարձակվեցին դարդասի վրա եւ բացեցին... Թե ինչպես գտա տնօրենին, ինքս էլ չգիտեմ: Անհնությունից աչքերս ուռած, ձայնը խռպոտած, նա միայն մի բանի կցկտուր բառերով դատապարտեց իմ հարցին: «Սա այլեւս դիմանալու բան չէ. աշխատում ենք 24 ժամ անդադար, նախատեսվածից ավելի հաց ենք արտադրում, էլի չենք կարողանում գոհացնել: Ողջ շուկան այստեղից է օգտվում: Գյուղացին միանգամից 8-10 հաց է գնում: Այսօր մի բանի անգամ զանգահարել եմ ՆԳ բաժին, որ կարգ դահեղանող միլիցիոներներ ուղարկեն, ասում են՝ մարդ չունենք... Ժողովուրդը, տեսա՞ք, ինչ է անում, մինչեւ վառարաններն են գալիս»...

Այո, տեսա, տեսա եւ որոշեցի գնալ մի բանի խանութ: Առաջինը մտա թիվ 56 («Մոսկվա» կինոթատրոնին կից) խոշոր խանութը:

Մարդիկ այստեղ էլ աշխատում են 24 ժամ, որպեսզի գիշերը հաց ստանան եւ առավոտյան շուտ վաճառեն: Նախորդ օրը փորել էին ցուցափեղկի խոշոր աղակին, վիրավորել վաճառողի թեւը... չնայած այստեղ էլ նախատեսվածից շատ հաց են ստանում: Իսկ ո՞ւր է գնում այդքան հացը. ի՞նչ է կատարվում, չէ՞ որ մարդիկ չեն խաբում, գազ ունեն, էներգիա ունեն, ալյուր ունեն, ուրե՞մն...

Այդ հարցով դիմեցի դարեանի եւ հացամթերքների նախարարության հացաբուլկեղենի, մակարոնի եւ հրուշակեղենի արտադրության եւ առեւտրի գլխավոր վարչության պետ Միխայել Աբրահամյանին:

«Դուք էլ գիտեք, որ ժամանակ առ ժամանակ վերջերս նման խուճապ լինում է հացի շուրջը: Եթե ճախկինում վառելիքն էր պատճառը. այսօր, պիտի ասեմ, լրատվական հաղորդագրություններն են իրենց դերը կատարում: Օրինակ, հաղորդում են՝ Սոխումում հաց չկա, սով է: Մոսկվայում հերթեր են: Ռուսաստանում գյուղացին հացահատիկի կիլոգրամը 35 ռուբլով է հանձնում, հացը քանկանալու է եւ այլն: Սրանք բավական են, որ առանց այն էլ լարված ջղերն ավելի դրկվեն: Ու ստեղծվում է խուճապ, որին մեծապես նպաստում է նաեւ շուկան, այսինքն՝ գյուղացին: Կանգնեք շրջաններ տանող ցանկացած խճուղու վրա եւ կտեսնեք, թե սեփական մեքենաներով ու հասարակական տրանսպորտով քաղաքից որքան հաց է գնում գյուղերը: Այսօր ամենաէժանը հացն է: Գյուղացին մի կիլոգրամ լոքի է վաճառում, 4 կգ հաց գնում: Մենք ահագանգ ունենք շրջանների գործկոմներից, որ կան մարդիկ, որոնք հացով կով են դահում: Չէ՞ որ հացը ամենակաղորիական սնունդն է: Դե արի ու հաց հասցրու: Անցյալ եւ նախանցյալ տարիներին օրական 280-300 տոննա հաց էինք թխում, այսօր (20.08) թխել ենք 448 տոննա: Դուք նշեցիք թիվ 2 հացի գործարանի վիճակը: Միայն այնտեղ չէ այդպես: Ցավոք, մեր ժողովրդի առաջն առնելը մեր ուժերից վեր է, իսկ միլիցիան չի ուզում օգնել ոչ խանութներում, ոչ գործարաններում»:

Խուճապը ոչ մի լավ բանի չի հանգեցնի, հարգելի համամաղամացիներ, բայց բանի որ երբեմ խոսքն ու խրատը հացի տեղը չեն բռնում, ուստի անսալով ձեզանից շատերի խնդրանքին, հրապարակում եմ ձեր առաջարկությունը:

«Քանի որ Ինարավոր չէ հսկել, թե ով ինչի համար ինչքան հաց է տանում, մենք համաձայն ենք, որ հացը կտրոնով լինի: Թող մասնագետները որոշեն, թե յուրաքանչյուր անձին օրական որքան հաց է հարկավոր սնունդն ապահովելու համար, այդ չափով էլ թող ամսվա մեջ մեկ անգամ կտրոն բաժանեն: Իսկ ով ուզում է շատ գնել, թող գնա մասնավորի մոտ»:

Չեմ թաքցնում, ես նույնպես համամիտ եմ ընթերցողների կարծիքին, բանզի այն, ինչին ականատես եղա վեր է ամեն դատկերացումից:

ԼԵՅԼԻ ԴՇԽՈՅԱՆ

# Ռուսաստանի հայ ձեռներեցները դատրաստ են օգնել Հայաստանին

Մենք արդեն հաղորդել էինք, որ մոսկվաբնակ ձեռներեց Գրիգոր Երիցյանը մեծ գումար է հատկացրել 80 հազար հայերեն այբբենարան տպագրելու համար:

Օգոստոսի 24-ին ՀՀ լուսավորության նախարարությունում կազմակերպված մամուլի ասուլիսը նվիրված էր այս իրադարձությանը: Ինչպես նշեց նախարար Հայկ Ղազարյանը, Գրիգոր Երիցյանն այն հազվագյուտ անձնավորություններից է, որոնք, տեղեկանալով Հայաստանի կրթության բնագավառի դժվարություններին, գործնականորեն արձագանքեցին:

1953 թ. Կիրովաբադում ծնված բարեբարը բարձրագույն կրթությունն ստացել է Լենինականի մանկավարժական ինստիտուտում: Մոսկվայում դասեսդանել է գիտական բեզ եւ ստացել փիլիսոփայական գիտությունների թեկնածուի կոչում:

Երեք տարի առաջ ընդամենը 30 հազար հիմնադրամով սկսելով սեփական գործը, այժմ դրն. Երիցյանն իր ղեկավարած Ֆիրմաների տարեկան շրջանառությունը հասցրել է հարյուրավոր միլիոնների:

Այբբենարանի տպագրության եւ տեղափոխման վրա չորս միլիոն ռուբլուց ավելի է ծախսվել. սակայն, նրա խոսքերով. *«գումարը չէ էականը, եթե անգամ ավելի մեծ ծախսեր դահանջվեին, ես իմ մտադրությունից հետ չէի կանգնի»*: Այբբենարանի տպագրության նկատմամբ հանդես է բերվել առավել հոգատարություն՝ կատարվել է բոլոր մանրակրկիտ ընտրություն, տպագրվել է Մոսկվայի ամենաժամանակակից սարքավորումներով հագեցած թիվ 1 օրինակելի տպարանում:

Գրիգոր Երիցյանը բացի Հայաստանի, Արցախի եւ ներքին սպյուռքի դպրոցների առաջին դասարանցիների համար նախատեսված այբբենարանները տեղ հասցնելուց, մեկ այլ, ավելի կարեւոր առաքելություն է ժամանել Հայաստան: Նա իր կյանքի նպատակն է համարում հայրենիքում այնպիսի վարժարան (ավագ դպրոց) ստեղծել, որտեղ ավարտողների համար, առանց ընդունելության քննություններ հանձնելու, բաց կլինեն աշխարհի ամենահեղինակավոր համալսարանների դռները:

Այս գաղափարի իրականացումն իրական հիմքերի վրա դնելու համար նա Երեւանում իր անվան հիմնադրամ է բացելու եւ կառավարությունից համաձայնություն աջակցություն ստանալու հույս ունի:

Վերջում դարոն Երիցյանը հայտարարեց, որ այսօր Ռուսաստանում կան մեծ թվով հայ մեծահարուստներ, որոնք, իրենց նկատմամբ Հայաստանի իշխանությունների ցուցաբերած համաձայնության եւ ուշադիր վերաբերմունքի դեպքում, կարող են հանրապետությանը ավելի մեծ չափերի օգնություն տրամադրել, բան կարելի է սպասել Արեւմուտքից:

ՀՈՎՍԵՓ ՊՈՂՈՍՅԱՆ



# Վառելիքի անսպասելի աղբյուր

*Ծրագիրը կա, մասնագետները կան. ի՞նչն է խանգարում*

Նախորդ ձմեռվա դժվարություններից հոգնած, ժողովուրդը հոգեբանորեն դատրաստ է նույնիսկ ատոմակայանի բացմանն «այո» ասել: Սակայն արդյոք բոլո՞ր հնարավորություններն օգտագործված են, արդյոք խնդրի լուծումն այլ տարբերակ չունի՞:

Նուբարաշենի աղբանոցը, որն ահռելի չափերի է հասել եւ սպառնում է էկոլոգիական աղետի վերածել, վաղուց արդեն վերամշակման եւ վերացման կարիք է զգում: Աղբամշակումն աշխարհի շատ երկրներում տասնամյակների դատմություն ունի եւ դասվում է լուծված խնդիրների շարքը: Այդ բնագավառում լուրջ արդյունքների է հասել արեւմտյան փորձը, որը ուսումնասիրման եւ փոխառման կարիք ունի:

Երեւանում աղբամշակման մասին վաղուց են խոսում եւ ոչ միայն խոսում՝ կառուցվել է աղբավերամշակող գործարան, գնվել են սարքավորումներ: Բայց գործարանը չի շահագործվել, զանազան դատճառներով շենքի դատերը ճաքեր են տվել, իսկ միլիոնների արժողությամբ սարքավորումները հնացել են եւ օգտագործման համար դարձել ոչ դիտանի:

Այսօր, Երրաղխորհուրդը նախաձեռնել է աղբավերամշակման կազմակերդումը, այդ հարցով զբաղվում է բարեկարգման եւ ճանապարհաշինարարական ընդհանուր արտադրական վարչությունը՝ Վ. Ղազարյանի գլխավորությամբ: Մոսկվայի Պանֆիլովի անվան ակադեմիայից հրավիրվել են հմուտ մասնագետներ, որոնց մասնակցությամբ մշակվել է աղբից կենսագազի ստացման ծրագիր: Արդեն մշակված է համաղատասխան տեխնոլոգիա, նախագիծը մշակել է վարչությանը կից «Կառուցվածք» կազմակերդությունը եւ իրականացվում է բաղբարեկարգշինարարության վարչություն:

Աղբանոցը շուրջ 30 տարվա դատմություն ունի: Տեղական աղբի մեջ (հիմնականում ուտելիքի մնացորդներ) օրգանական բաղադրությունը մեծ չափերի է հասնում: Ուստի, նրա բայբայումից առաջացող գազերի դարունակության մեջ մեթանի բաղադրությունը կազմում է 60-65 տոկոս: Այն խիստ ձեռնտու է. հետ է լինում գազ ստանալը:

Աղբանոցի 10 հեկտար տարածությունն այժմ ծածկված է կավահողով, որի մակերեսն ընդերքում դարունակվող գազից ասես շնչում է: Այդ տեղանքում վերացել են ծուխն ու աղբահոտը, դակասել են միջատները, նոր բերված աղբը եւս ծածկվում է կավով: Հաջորդ բայը դիտի լինի կավաշերտի մեջ հորատանցքերի բացումը եւ խողովակներով գազի հոսքը դեպի խտացուցիչ մեքենա ուղղելը:

Այժմ վարչությունն զբաղված է ծնկածեւ խողովակներ դատվիրելով, որոնք հորատանցքերի գազը դիտի հասցնեն գլխավոր խողովակաբար: Վարչությունում կատարված աշխատանքներից բավարարված են եւ գրանում են, որ դրանք համաղատասխանում են միջազգային դահանջների չափանիշներին:

Սակայն այս կարեւոր նախագծի իրականացմանը տրամադրված միջոցները շատ փոքր են, եղածն էլ առայժմ բղի վրա է: Իսկ ստացված գազը օդ ու ջրի նման անհրաժեշտ է հանրապետությանը: Այն սկզբնական շրջանում հավանաբար կտրամադրվի բոչնաբուծարանին կամ այլ ժամանակավոր նպատակների, մինչեւ վերջնականորեն որոշվի, թե ինչի համար է ավելի նպատակահարմար օգտագործել:

Մնում է ենթադրել, թե նման մտահղացումներ ու նախագծեր հաճախակի տեսնելու մեր բոլորիս ցանկությունը կիրականանա, իսկ այդ նախագծերի իրականացման ճանապարհին ավելի փոքր խոչընդոտներ ու ավելի շատ օժանդակություն կդատահովվի համատեղ ջանքերի շնորհիվ:

Ա. Օ.

# Հանդիպում Արմավիրի շրջանում

*ՀՌԱԿ-ը ներկայացնում է իր տեսակետները*

*Օգոստոսի 25-ին Արմավիրի շրջանի Մշակույթի դալատում տեղի ունեցավ Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության Հանրապետական վարչության նախագահ Ռուբեն Միրզախանյանի, ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամներ, ՀՀ Գերագույն խորհրդի դատգամավորներ Վիգեն Խաչատրյանի եւ Վարդան Պետրոսյանի հանդիպումը Արմավիրի շրջանի հասարակության ներկայացուցիչների հետ:*

*Հանդիպման ընթացքում ՀՌԱԿ Հանրապետական վարչության անդամները ներկաներին հակիրճ ծանոթացնելով կուսակցության դատմությանը, ներկայացրին Հայաստանի ռամկավար ազատական կուսակցության դիրքորոշումը Հայաստանի Հանրապետության ներքին եւ արտաքին քաղաքականության հրատապ հարցերի վերաբերյալ: Վերջում հյուրերը դատասխանեցին ներկաների բազմաբնույթ հարցերին* ■

## ԽՄԲԱԳՐԻՆ ԳՐՈՒՄ ԵՆ

«Անվիճելի է հանրապետությունում տիրող ճգնաժամը: Դա դայմանավորված է ոչ միայն գործադիր իշխանության անձեռնհասությամբ, այլեւ, որ գլխավորն է, խորհրդարանի ծայրահեղ անկարգադահությամբ:

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ ստեղծված իրավիճակը ձեռնտու է գործադիր իշխանությանը, որն ամեն կերդ ճգտում է կրճատել օրենսդրական իշխանության՝ ժողովրդավարության հիմնական երաշխավորի, իրավունքները:

Ցավոք, հանրապետությունում շատերը հիասթափված են իրենց ընտրյալներից, որոնք նույնիսկ չեն բարեհաճում մասնակցել Գերագույն խորհրդի նստաշրջաններին:

Վերջին տարիների փորձը ցույց է տվել, որ խորհրդարանի նոր ընտրություններն ու գործադիր իշխանությունները փոխելը ոչ միայն այսօր տեղին է, այլեւ խիստ անհրաժեշտ: Ահա թե ինչու ներկայիս փուլում խիստ կարեւոր են ողջ ընդդիմադիր ուժերի համախմբումն ու փոխըմբռնումը, որդեսզի արագ կերդով ստեղծվի «սվերային կաբինետ», որն էլ անհրաժեշտության դեդքում ժամանակավորապես կփոխարինի լուծարվող կաբինետին:

Ազգի եւ հայրենիքի ճակատագիրը ձեր ձեռքին է, սիրելի հայրենակիցներ:

*Յու. Գ. Պետրոսյան, Երեւան, Կուտուզովի թիվ 40»:*

«Հայաստանն իր բնակչության թվի համեմատ բազմակուսակցությամբ աշխարհում գրավում է առաջին տեղը *(իրա՞վ.-խմբ.)*: Ի՞նչ դեր են խաղում այդ կուսակցությունները ներկայիս խաբնաբափոր վիճակում՝ բացարձակապես բացասական: Ի՞նչ է հարկավոր անել հանրապետությունը ստեղծված կացությունից հանելու համար: Բոլոր կուսակցությունները դետք է համախմբվեն ժողովրդի կողմից ընտրված իշխանությունների շուրջը, դաբնան մեկ սիրտ ու հոգի եւ փրկեն մեր երկիրը: Այլապես, կուսակցական սուր վեճերը ոչ մի լավ բանի չեն հանգեցնի:

*Տիգրան Մաղաքյան, դատերազմի վետերան, Երեւան, Նժդեհի փող թիվ 34/1»:*

«Խորին շնորհակալություն, որ դուք կաք եւ մեզ մատուցում եք հետաքրքիր նյութեր, փակում եք սադրիչների ճանապարհը եւ ժողովրդին եք հասցնում միմիայն ճշմարտությունը:

*Հայկազ եւ Սիդա Մկրտչյաններ, Կիրովական, Տերյան թիվ 7»:*

«Կարդում եմ «Ազգ»ի բոլոր համարները: Ինձ շատ հոգեհարազատ է հանուն ազգի միասնության ՈԱԿ-ի վարած քաղաքականությունը:

*Սշոտ Դարմունյան, Կումայրի, դետական հարկային տեսչություն»:*

«Հարգելի խմբագրություն, մայիս ամսին ուր ամսով բաժանորդագրվել եմ «Ազգ» եթերային: Մայիսին ստացել եմ միայն թիվ 25, 28 եւ 29 համարները, այսինքն՝ 36 տոկոսը միայն: Հետաքրքրվել եմ, կրդակներն էլ չեն ստացել, ուրեմն կարդի աշխատողները մեղավոր չեն: Խնդրում եմ ձեր միջամտությունը, որդեսզի կանոնավորապես ստանամ իմ սիրելի թերթը:

*Ռ. Ոսկանյան, Կիրովական, Կնունյանց 48»:*

Քանի որ նման նամակներ խմբագրությունը մեկ անգամ չէ, որ ստացել է, հարկ ենք համարում դարձյալ անդրադառնալ այս լուրջ հարցին:

Խմբագրությունը շահագրգռված է իր թերթը լայն զանգվածների սեփականությունը դարձնելու հարցում: Ցավոք, տարվա ընթացքում մամուլի տարածման հանրապետական գործակալության հետ որոշ հարցերում համաձայնության չգալու դատճառով, շատ թերթերի եւ ամսագրերի բաժանորդներ (եւ անհատ գնորդներ) տուժեցին:

Վերջին ամսում գործակալությունը լուրջ քայլեր ձեռնարկեց իր աշխատանքում տեղ գտած թերությունները վերացնելու համար եւ հուսով ենք, որ այլեւս խնդիր չենք ունենա նրա հետ ոչ մենք, ոչ դուք, հարգելի ընթերցողներ:

Լ.Գ.

digitised by A.R.A.R.@

# Մեզ պետք են առողջ, մարտունակ պատանիներ. որտե՞ղ պետք է պատրաստվեն նրանք

**Վերջերս շաբաթերում հայտնվել էին «Վարազդատ բագավորի» տարօրինակ անունը կրող ֆոլեջի ընդունելության հայտարարությունները: «Մարզական Հայաստան» թերթում ծշտվում էր, որ ֆոլեջը «ռազմակիրառական-մարմնակրթական է»: Չնայած այս հայտարարություններին, դիմորդների թիվը փոքր էր:**

«Դժվար չէ կռահել, որ խուճապ հարուցողն այստեղ «ռազմակիրառական» բառն է եղել, սառն է ֆոլեջի տնօրեն, կենսաբանության դոկտոր Թագվոր Մանուկյանը: Սրա հիմքում նույն այն բարոյահոգեբանական պատճառներն են, որոնք այսօր տաղտկան վտանգի առաջ են կանգնեցրել մեր ազգային բանակի ստեղծման կենսականորեն անչափ կարևոր խնդիրը: Դոք տեսած կա՞ք մի երկիր, որտեղ պաշտպանության նախարարը զբաղված լինի դասալիքներ որսալով: Վերջապես, եթե պատերազմ է, մեր օրենքներն էլ պիտի պատերազմական լինեն»:

**– Բայց ասացեք, որո՞նք են այս փոքր կազմության պատճառները:**

– Առաջին պատճառն, ըստ իս, այն է, որ մենք դարեր շարունակ չենք ունեցել կամ առիթից առիթ ենք միայն ունեցել ազգային, պետական բանակ: Այսինքն, բացակայել է բարոյահոգեբանական դաստը, որ կհասունանար այն կարևոր հասկացողությունը, որ բանակում ծառայելը յուրաքանչյուր պատանու կյանքում ամենակարևոր և ամենից պատվավոր իրադարձությունն է: Հիշո՞ւմ եք, մի գեղեցիկ սովորություն ունինք, իրենց որդուն զինվորական ծառայության ուղարկելիս ընտանիքը խնջույք էին կազմակերպում: Դա հնուց եկող ծես էր՝ ի հանրավորումն պատանու տղամարդ դառնալու, մարմնական արատներ չունենալու և հայրենիքի պաշտպանության պատվին արժանանալու իրավունքի: Բայց մեր օրերում այդ սովորությունը կորցրել էր իր բովանդակությունը «բանակի ՀԵԴ» էր ու վերջ, իսկ հիմա, կարծեմ, ընդհանրապես վերացել է:

Երկրորդ պատճառը: Զինվորի պատվի և արժանապատվության ներաշխավորը պետությունն է: Պետությունն է, որ ամեն օր և ամեն ժամ բոլոր միջոցներով պիտի բարձրացնի թե զինվորի, թե տղայի, ինչպես հիմա սիրում են ասել, սեյսինգը: Ցարական Ռուսաստանում, օրինակ, մեծագույն անպատվություն էր, երբ ազնվականը զրկվում էր բանակում ծառայելու պատվից, իսկ շքանշանի արժանացած զինվորի ընտանիքը մահ ազատվում էր ամեն կարգի պարավարական հարկերից ու տուրքերից: Կամ, ասենք, մեր օրերի Իսրայելում բանակում ծառայում են և տղաները, և աղջիկները, իսկ հայրենիքի պաշտպանության չարժանացած տղաների հետ պարզապես չեն ամուսնանում:

Իսկ մենք ի՞նչ ենք անում: Մեր հեռուստատեսությամբ (պետական՝ հեռուստատեսությամբ) ամեն օր ականատես ենք լինում ամենախոր հաղորդումների: Ներկայացվում են ազատամարտիկները, այն ազնվագույն տղաները, որ այսօր, փաստորեն, Հայաստանի Հանրապետության ազգային բանակն են ներկայացնում, բայց ինչպե՞ս: Գրեթե բոլորը չսափրված, բափբփված, ամենասարսափելի հագուստ-կաղուստով, իսկ խոսակցությունը միշտ այն մասին է, թե զինվորները քաղցած են, ծիախտս չունեն, չունեն մինչև իսկ փամփուշտ, վառելիք, տեխնիկա և այլն: Ասացեք, այսպիսի տեսարաններից հետո ո՞վ կուզենա բանակ գնալ կամ ո՞ր ծնողը որդուն կուղարկի զինվորական ծառայության, կամ մեր ֆոլեջ...

Երրորդ պատճառը նույնպես հոգեբանական է: Կորսվել է միասնական հայրենիքի զգացողությունը: Այսօր երեւանցու համար հայրենիքը Երեւանն է, կաղանցու համար՝ Կաղանը, արտաշատցու համար՝ Արտաշատը: Ավելին՝ հայրենիքը սեղմվում-կծկվում է ծննդավայր երջանի, գյուղի սահմանում: Սրա հետևանքները ողբերգական են. ինքնապաշտպանության խմբերը կռվում են, քանի դեռ չի ընկել իրենց գյուղը, իրենց տունը: Եվ, ասված չանի, հարազատ տարածքի կորուստից հետո խումբը ցրվում է, տվյալ գյուղի բնակիչն իր կռիվն ավարտված է համարում: Այսպես բանակ չի ստեղծվի:

Եվ ահա, շարունակելով խորհրդային տարիներին արմատավորված ոչակտիկան, երբ հայրենիքի պաշտպանությունն ինչ-որ պայմանական բան համարելով, ծնողներն իրենց զավակներին զարուղի ծանապարհներով ազատում էին զինվորական ծառայությունից, այսօր էլ, երբ բշնամին արդեն մեր տունն է մտել, անում են ամեն ինչ, որպեսզի «երեխան» բանակ չգնա:

Հեռու չգնանք: Բժշկական ինստիտուտի դիմորդների ծնողներն, ինչպես գիտեք, արդեն սկսել են պահանջ-բողոքի ցույցերը: Յուրաքանչյուրն ուզում է, որ «երեխան» բժիշկ դառնա: Բարի՝: Եկեք հայտարարենք, ասենք, զինվորական բժիշկներ պատրաստող ինստիտուտի ստեղծման մասին և մրցույթից դուրս մնացած դիմորդներին հրավիրենք սովորելու: Համոզված եմ, ոչ ոք չի գա, քանի որ այստեղ էլ հնչում է «զինվորական» բառը:

Ահա այսպիսի մթնոլորտում է խուճապ հարուցում «ռազմակիրառական» բառը, և մենք ունենում ենք դիմորդների թերալրում: Սիրտդ ցավում է կրկնել. եթե պատերազմ է, օրենքները նույնպես պիտի պատերազմական լինեն: Մեր բանակը չի՞ կազմավորվում: Հավանաբար սեղանիկների տողերին կամ նույն փողոցներում միտինգ անողներին, և կիսամաղվի ազգային բանակը: Ինչո՞ւ ենք մոռացել Արամ Մանուկյանին կամ Նժդեհին, որ նույնքան ճգնաժամային պայմաններում, բայց ավելի դաժան, քան արդարացված միջոցներով բանակ ստեղծեցին, որպեսզի մենք ունենանք այսօրվա Հայաստանը:

Փոխենք մեր հանրապետությունում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտը, և ամեն բան կարգի կընկնի: Ի դեպ, մեր դիմորդների թերալրման պատճառներից մեկն էլ մեր կյանքի սոցիալական կողմն է: Մեր ժողովրդի գիտակցության մեջ «ֆոլեջ» անվանումն անպայման զուգորդվում է կոռուպցիայի, վճարովի ուսուցման հետ, իսկ մարդկանց մեծ մասն այսօր ամենասուղ պայմաններում է ապրում: Ցանկանում եմ տեսել, որ մեր ֆոլեջում ուսումն անվճար է, և ուսանողներն էլ կրթաթոշակ են ստանալու, ինչպես մնացած բոլոր պետական բուհերում:

**– Իսկ դիմորդներն ինչպե՞ս են հանձնում քննությունները, ինչպիսի՞ն է նրանց Ֆիզիկական պատրաստվածությունը:**

– Սա խոսակցության առանձին նյութ է և մեր ցավոտ հարցերից մեկը: Չնայած, ինչպես ասացի, թերալրում է, բայց դա ամենևին չի անդրադառնում քննությունների խստության և անաչառության վրա: Տեսեք արդի, դիմորդների շարք երեսուն տոկոսն արդեն անբավարար գնահատական է ստացել ընդհանուր Ֆիզիկական պատրաստության քննությունից:

Դժվարանում եմ պատկերացնել, թե տասը տարի դադրոցում Ֆիզկուլտուրա անցած ու դրական գնահատականներ ստացած պատանին ինչպե՞ս է, որ 100 մ տարածությունը վազում է 17,6 վայրկյանում կամ 1000 մ 6,12 րոպեում, տեղից ցատկում ընդամենը 2,02 մ, իսկ պտտոցից (ընդհանուր Ֆիզպատրաստության նորմեր), որն իր կարեւորությամբ չոլիճի գիշի մինչեւ իսկ հասնում լեզվին:

Այսօր մենք ունենք սպորտ: Վկա՝ մեր ազգային դրոշի բարձրանալը, մեր օրհներգի կատարումը Բարսելոնի օլիմպիադայում, այն բազմաթիվ հանդիսականները, որ հազար հանդիսականներ, որ հոսնկայս ողջունում էին մեր հաղթական մարզիկներին, մեր թանկագին մարզիկներին, մեր հպարտության անդատմելի զգացումը: Սպորտ, այո՛, ունենք, բայց չունենք մարմնակրթություն: Սա է մեր ազգի Ֆիզիկական պատկերը: Տեսնե՞լ եք մեր ոստիկաններին: Այդպիսի՞ն էր լինելու օրենքի պահապանի տեսքը: Անհրաժեշտ է, որ Ֆիզպատրաստության համապատասխան նորմերը չհանձնողները հեռացվեն այդ ասպարեզից կամ կատարեն առավել ցածր վարձատրվող աշխատանք:

Ես, օրինակ, ուզում եմ գոնե մի անգամ մեր հանրապետության նախագահին տեսնել թենիս խաղալիս կամ վազելիս (ինչպես ԱՄՆ-ի պրեզիդենտին), մեր նախարարներին ու երեսփոխաններին՝ բասկետբոլ, ֆուտբոլ խաղալիս: Դա մի կողմից կնպաստեր նրանց «ժողովարացմանը», մյուս կողմից՝ լավագույն քարոզչությունը կլիներ մեր երիտասարդների համար: Բայց, ցավոք, հեռուստացույցը ներկայացնում է միայն մեր խոսող կամ ծխող ղեկավարներին...

**– Ինչի՞ց սկսեցիք, ո՞ւր հասաք...**

– Այս ամենն, իհարկե, փոխադարձաբար շաղկապված է, բայց սկսեցինք նրանից, որ Վարազդատ բագավորի անվան ֆոլեջը, որն ամենեին բուն ռազմական բուհ չէ, կայացել է եւ այս տարվանից գործելու է: Պարզապես հայտարարված է լրացուցիչ ընդունելություն՝ մինչեւ օգոստոսի 29-ը, Արցախի, սահմանամերձ գոտիների դիմորդների եւ այլ արժանավորների համար: Սպասում ենք բոլոր այն երիտասարդներին, ովքեր իսկապես ուզում եմ մարդավարի ապրել եւ պիտանի լինել հայրենիքին:

Հարցազրույցը վարեց
ՆԵՐՍԵՍ ԱԶԱՐԵԿՅԱՆԸ

# Հայաստանից Ֆրանսիա մինչեւ մեկ տարվա գործուղում

Արեւմտյան երկրների՝ Հայաստանի բարգավաճման, բնակչության տնտեսական բարելավմանն ուղղված ջանքերը միշտ չէ, որ ծախողվում են: Որոշ արտասահմանյան կամ սփյուռքահայ կազմակերպություններ, որոնք լուռ ու մունջ աշխատելով, գուցե կրիայի դանդաղ, սակայն ամուր քայլերով առաջ են ընթանում ձեռք բերելով մշտական հաջողություններ:

Դրանցից մեկն էլ Ֆրանսիայի հայ գործարար մարդկանց հիմնած GIA հայկական միջմասնագիտական կազմակերպությունն է, որի նախագահ ծարտարապետ որն: Սանուել Դեյիրմենջյանի հայրենանվեր ու բարեգործական աշխատանքները ծանոթ են մեր ընթերցողներին: Նրա հետ խոսելիս տեղեկանում ենք, որ երբ մեծ ջանքերով հաջողվեց Հայաստան հրավիրել «Բանկ դը Ֆրանս»ի գլխավոր տնօրեն որն. Բենուային, Հայաստանի իշխանությունները լրջորեն չհետաքրքրվեցին նրանով, մինչդեռ Բենուան տրամադրված էր լրջորեն աջակցել Հայաստանի դրամատնային համակարգի վերակազմավորմանը:

*«Ոչինչ,* ասում է որն. Դեյիրմենջյանը, *մենք որոշել ենք չվիրավորվել ու աշխատել մինչեւ մեր նպատակներին հասնելը»:*

Օգոստոսի 25-ին երեւանի առեւտրական պալատում հանդիպում կայացավ GIA-ի եւ այս պալատի համագործակցությամբ մի տարի առաջ հիմնված «Սեմա» Ֆրանսիական մենեջմենտի դրդրոցի երկրորդ ուսումնական տարվա թեկնածուների միջեւ: Սանուել Դեյիրմենջյանը եւ նրա օգնականները ծանոթացան «Սեմա»ի երկրորդ տարվա դասընթացներին, որոնք սկսվելու են սեպտեմբերին եւ կտեւեն ուղիղ մեկ տարի:

14 տարբեր մասնագիտական մոդուլների, որոնցից ամեն մեկը արժե 1000, իսկ մեկ տարում՝ 14000 ռուբլի, մասնակցող այս «չափահաս ուսումնասեր» երիտասարդները, որոնց ընդհանուր թիվը հասնում է 25-ի, ընտրվել են ավելի քան 100 թեկնածուներից:

Հետաքրքիր է այն երեւույթը, որ հակառակ Ֆրանսիայի GIA կազմակերպության անդամների, Հայաստանի «Սեմա»ի երկրորդ տարվա դասընթացների մասնակիցներից շատերը գեղեցիկ սեռի ներկայացուցիչներ էին, կային նաեւ տարբեր բնագավառների մասնագետներ՝ սկսած ծարտարագիտական համալսարանի դասախոսներից, վերջացրած արեւելագետներով, փոքր ձեռնարկությունների տնօրեններ, սկսնակ բիզնեսմեններ, մի հեռուստաալրագրող եւ նույնիսկ... հանրապետության նախագահ որն. Լեւոն Տեր-Պետրոսյանի աղջատից երեք կարեւոր պաշտոնյաներ:

Ինչ վերաբերում է անցյալ տարվա դասընթացների 10 շրջանավարտներին, նրանցից 4-ը 6 ամսից մինչեւ 1 տարի ժամկետով, վերապատրաստման եւ գործնական մասնագիտացման նպատակով, գործուղվեն Ֆրանսիա հյուրընկալվելով Ֆրանսիական կառավարության կողմից:

GIA հայկական միջմասնագիտական կազմակերպությունը, որը բացառիկ վստահություն եւ հարգանք է վայելում, Ֆրանսիական կառավարության Հայաստանի «Սեմա»ի դասընթացների լավագույն շրջանավարտներին 6 ամսից ոչ պակաս, նույնիսկ մինչեւ մեկ տարի տեւողությամբ գործուղելու է Ֆրանսիա պետական խոշոր ձեռնարկություններում, նախարարություններում գործնական մասնագիտացման:

Կոմերցիոն «Վոյաժ» ասոցիացիայի տնօրեն տիկ. Սուզաննա Պողոսյանը, Շարենցավանի կենտրոնածուլ գործարանի մեքենագրգիայի ինժեներ որն. Վահրամ Բարեգյանը, Արիա-Սեւան շինվարչության պետի տեղակալի խորհրդատու որն. Արմեն Միմայելյանը եւ շինարարության նախարարության հեռանկարային զարգացման վարչության պետի տեղակալ, ծարտարապետ որն. Կարեն Սերոբյանը հոկտեմբեր ամսին մեկնելու են Փարիզ:

Ր. Հ. Ա.

*Դարձյալ լրատվական պատերազմի մասին*

# Որերորդ անգամ չեղած բանը եթեր է տրվում

**Ընթերցողն ու ունկնդիրն այս օրերին չեն կարող անտարբեր լինել օր օրի, ժամ առ ժամ շիկացող տարափոխիկ երեւույթների եւ իրադարձությունների նկատմամբ:**

**Կամա թե ակամա չենք կարող չհետեւել նախկին կենտրոնական լրագրերին, ռադիոյին, հեռուստատեսությանը, մասնավորապես, «Նովոստի»ին, «Վեստի»ին:**

**«Նովոստի»ն կարծես հակված է կատարել ԱՊՀ երկրների զանգվածային լրատվական ընդհանուր միջոցի դերը: Սակայն նկատելի է, որ թե՛ «Նովոստի»ն, թե՛ «Վեստի»ն կարծես մեկը մյուսին լրացնում են, շատ ժամանակ էլ իրար կրկնում: Սա դեռ մի կողմ. վատն այն է, որ երկու հեռուստակայաններն էլ մեզ արդեն շատ հայտնի երեւույթներն ու փաստերն այնպես են եթեր տալիս, որ ծշմարտության հետ անգամ չի լինում եւ, փաստորեն, բշնամական դեր է խաղում այս կամ այն կողմի համար:**

**Տառացիորեն մի քանի օր առաջ «Վեստի»ով ադրբեջանցի լրագրողը հին ոճով «ազդարարեց» այն մտացածին լուրը, թե իբր Ղարաբաղի հազարավոր հայեր դիմել են Ադրբեջանի ղեկավարությանը՝ խնդրելով Արցախին մշակութային ինքնուրույնություն տալ, Ադրբեջանի կազմում մնալու պայմանով: Այս ասելուց հետո ազգային առոգանությամբ եւ շեշտադրությամբ ավելացրեց. «Նման պայմաններում էլ Հայաստանի եւ Ղարաբաղի բանակը հզոր ուժեր է կենտրոնացնում Ադրբեջանի սահմաններում՝ ի կատար ածելու վաղուցվա իր ծրագրերը...»:**

**Չեղած բանը փաստ դարձնելը, սուտը ճշմարտության տեղ անցկացնելը եղել եւ մնում է թուրքական մամուլի եւ, ընդհանրապես, զանգվածային լրատվական այլ միջոցների փորձված ծեւն ու մեթոդը: Դեռ Արցախյան շարժման առաջին օրերից Ադրբեջանի թերթերը, ռադիոն եւ հեռուստատեսությունը դիմում էին ամեն մի կեղծիքի՝ թյուրիմացության մեջ գցելու միլիոնավոր մարդկանց (հատկապես ռուսալեզու պարբերականները՝ «Բակինսկի ռաբոչի», «Վիշկա» եւ այլն), հայերի անունից կեղծ նամակներ էին տպագրում, իբր նրանք դեմ են Արցախն Ադրբեջանի կազմից դուրս բերելուն, նրան լիովին ինքնավարություն տալուն:**

**Այսօր էլ նույն ոճով, նույն բովանդակությամբ «Վեստի»ն եթեր է տալիս խայտառակ սուտը. ինչպե՞ս կարող է արցախցին Ադրբեջանի ղեկավարությանը դիմել՝ բավարարվելու միայն մշակութային ինքնավարության իրավունքով, այն էլ հինգ տարվա արյունահեղ կռիվներից հետո:**

**Զարմանալ կարելի է, որ թե՛ «Վեստի»ն, թե՛ «Նովոստի»ն եթեր են տալիս այնպիսի «նյութեր», որոնք անդրադարձ շատ ու շատ ունկնդիրների զայրույթ ու դժգոհություն կդատճառեն: Մեկը հարցնելու լինի, թե «Վեստի»ի կամ «Նովոստի»ի պարոն աշխատողներ, դուք ձեր ձեռքի տակ ունե՞ք, արդյոք, որեւէ փաստ, նամակ կամ դիմում Արցախի հայերից, թե իբր դիմում են հղել Ադրբեջանի նախագահ Ա. Էլչիբեյին՝ խնդրելով Ղարաբաղի հիմնահարցը լուծել «նոր ձեւով», «նոր նկատառումով»:**

**«Վեստի» եւ լրատվական մյուս միջոցներին խորհուրդ կտայինք հեռու մնալ սադրանքներից, որոնք խանութ են տալիս նրանց վարկը, անունը:**

ՍՈՓԻԱ ԱՎԱԳՅԱՆ

digitised by A.R.A.R.@

# Տնտեսական գործոնի դերը երկրների արտաքին քաղաքական ձեւավորման գործում

Երկու տարի է անցել Իրաք-Քուվեյթ հակամարտությունից, սակայն կրկին այդ երկրները բոլորի ուշադրության կենտրոնում են: Պատճառը Քուվեյթը իրաքյան տարածք համարելու իրաքյան ղեկավարության մի շարք ակնարկներն են եւ Սադդամ Հուսեյնի վարչակարգը տաղտկալու ԱՄՆ-ի առայժմ անհաջող փորձերը:

Ծոցի պատերազմի հետեւանքով արաբական աշխարհում ուժերի նոր դասավորվածությունը կրկին արժանանում է քաղաքագետների ուշադրությանը: Նրանք փորձում են պատասխանել հետեւյալ հարցերին. որո՞նք են պատճառները, որ առաջին հայացքից Սադդամի դաշնակից երկրները երես թեքեցին նրանից, ինչո՞ւ են այսօր տեղաբաշխված եւ ինչպիսի՞ դիրքերում են այսօր կանգնած արաբական աշխարհի երկրները, ինչպիսի՞ գործոններ են ազդում այդ երկրների արտաքին քաղաքականության ձեւավորման վրա:

Այս հարցերը կարեւորվում են նաեւ այսօր, քանզի 1. Ծոցի պատերազմը չվերացրեց ոչ մի հակամարտություն, չլուծեց ոչ մի հանգույց: Դրանք շարունակում առայժմ միակ ուժի դայմաններում, այդ ուժի իսկ թելադրանքով «ընդհատակ են անցել». 2. արաբական երկրների միջեւ այն հարաբերությունները, որոնք «ջրի երես» դուրս եկան երկու տարի առաջ եւ կանխորոշեցին ուժերի աղեղն հայտնի հարաբերակցությունը, մեծ մասամբ պահպանվել են:

Մերձավոր Արեւելքում կատարվող իրադարձություններն ուսումնասիրելիս անհնար է անտեսել ԱՄՆ-ի եվ ԽՍՀՄ-ի վարած քաղաքականությունն այդ շրջանում: Այսօր ԽՍՀՄ գոյություն չունի, իսկ ԱՄՆ-ը վարում է բավական ակտիվ քաղաքականություն: Դեռ 1943 թ. Ֆրանկլին Ռուզվելտը հայտարարեց, որ *«Սաուդյան Արաբիայի պաշտպանությունը կենսական է ԱՄՆ-ը պաշտպանելու համար»:* Նրա իրավահաջորդներ Տրումենը, Էյզենհաուերը, Նիքսոնն ու Քարտերը միեւ նույն Ծոցը պահել են իրենց ուշադրության կենտրոնում: 1950-ական եւ 60-ական թթ. ԱՄՆ-ի խաղաքաղաքը այդ շրջանում խիստ գաղտնի եւ անակնկալ գործողություններն էին: 70-ականներին ամենաարդյունավետը համարվեց հենակետեր ընտրել եւ նեղդրումներ կատարել հիմնականում Իրանում եւ Իսրայելում: Այս ստրատեգիան փլուզվեց 1979 թ. շահի տապալումով, եվ Վաշինգտոնն անցավ կենտրոնացված հրամանատարությամբ «արագ ծավալման ուժերի» գաղափարի կիրառմանը: Ջիմի Քարտերի այս գաղափարը ձեւափոխվեց 1987 թ. Բուշի լայնածավալ ուժերով, երբ ԱՄՆ-ը մոտ 50 ռազմանավերից բաղկացած նավատորմ ուղարկեց Ծոց՝ աղահովելու Քուվեյթի տանկերները եւ օգնելու Իրաքին՝ առավելություն ձեռք բերելու Իրանի հետ պատերազմում:

Մի հայացքն անցյալին հնարավորություն է տալիս տեսնելու այն ամբողջ ընթացքը, որն ի վերջո հասցրեց «Անապատի փոթորիկ» գործողությանը: Վերջինս մի գծի շարունակություն է, որը որոշ ուսումնասիրողների կարծիքով սկսվեց ԿՀՎ-ի 1953 թ. Իրանում հաջող մի գործողությունից, որի հետեւանքով տապալվեց Մոհամմադ Մուսադդիկի պառլամենտական ռեժիմը: Կարելի է ասել նաեւ, որ սա հիմքն էր Վաշինգտոնի իրար հաջորդող այնպիսի գործողությունների, ինչպիսիք են Իրանում 1960 եւ 70-ական թթ. սկզբին շահի, իսկ հետո ազգայնական ռեժիմների տապալումը, 1980-ականներին Բաղդադին հրահրելը Իրանի Իսլամական Հանրապետության դեմ եւ վերջապես 1990 թ. օգոստոսի գործողությունը նույն Իրանի դեմ, որն արդեն շրջանում չէր համապատասխանում ԱՄՆ-ի շահերին:

ԱՄՆ-ի միջամտության ամեն մի վերը նշված շրջան ունի բազմաթիւ եւ բազմաթիվ հիմքեր ու պատճառներ: Բայց մեր խնդիրն այս անգամ տնտեսական հարցերի դիտարկումն է, որոնք ընկած էին այս միջամտությունների հիմքում: Լայն իմաստով կարելի է ասել, որ տերազմը ստեղծել էր մի տեսակ լուռ փոխհամաձայնություն Սիրիայում եւ Եգիպտոսում ազգայնական վարչակարգերի եվ արաբական թերակղզու պահպանողական նավթային միապետությունների միջեւ: Դրա իմաստը հետեւյալն էր՝ ազգայնականները դադարեցնում են միապետներին տապալելու փորձերը, իսկ վերջիններս էլ, գնահատելով նման վարքագիծը, ֆինանսական օգնություններով եւ նեղդրումներով պետք է օգնեին ազգայնականներին՝ սոցիալական խաղաղության հասնելու:

1973թ. հոկտեմբերի պատերազմ: OPEC-ը հնարավորություն ունեցավ բարձրացնելու նավթի գները եւ միջոցներ հայթայթելու: Դրանք հնարավորություն ընձեռեցին այդ «դաշինքին» զոյատեւել նաեւ հաջորդ տասնամյակում: Ֆինանսական ներդրումների հոսքին ավելացավ նաեւ ավելի մեծ դրամական փոխանցումների հոսքը հարյուր հազարավոր եգիպտոսցի, հորդանանցի, պաղեստինցի բանվորներից, որոնք աշխատում էին արաբական թերակղզու հարուստ պետություններում:

Արաբական նավթարդյունահանող երկրների համար այս ոսկեդարը վեջացավ 80-ականներին, երբ էներգիայի համաշխարհային շուկան սկսեց ավելի լայն օգտագործել հյուսիսային ծովերի, Մեքսիկայի, Ալյասկայի եւ այլ պաշարներ: Նավթի ընդհանուր վաճառքի մեջ OPEC-ի բաժինը խիստ նվազեց: 80-ականներին նավթի գներն սկսեցին ընկնել: Այս ընթացքում, օրինակ, Սաուդյան Արաբիայի բյուջեի տարեկան դեֆիցիտը կազմում էր 9-20 մլրդ. դոլար, որը հիմնականում փակվում էր անցած տարիներին դիզված փողերով:

Այս դժվարություններին ամենապատրաստը դուրս եկավ Քուվեյթը: Էմիրությունը հաղթահարեց սկսեց առաջատար ընկերությունների արժեթղթեր եւ անշարժ կալվածքներ գնել զարգացած երկրներում: Քուվեյթի ազդեցությունը սկսեց տարածվել նաեւ նավթի վերամշակման, մարկետինգի եւ հիմիական արտադրության ոլորտների վրա: 1980-ականների կեսերին այս երկիրն ավելի շատ վաստակում էր պաշտոնական ներդրումներից, քան հում նավթի վաճառքից: Այս ամենը հնարավորություն էին տալիս Քուվեյթին՝ մի տեղի վնասը ծածկել եւ շահույթով դուրս գալ մեկ ուրիշ տեղում: Սա մի հնարավորություն էր, որը նավթարդյունահանող երկրների մեծ մասին այսօր էլ դեռ տրված չէ: Սրա շնորհիվ Էմիրությունը իր ազգային համախառն արտադրանքի յոթ տոկոսը օգնության ձեւով տալիս էր ուրիշ երկրների՝ մակարդակ, որին ոչ մի երկիր դեռ չի հասել:

Մինչեւ Ծոցի ճգնաժամը Քուվեյթը արաբների մեծ մասի կողմից դիտվում էր որպես մի կառույց, որը արաբ ժողովրդին զրկում էր արաբական պաշարներից ի շահ արեւմտյան ընկերությունների եւ մի խումբ իշխանավորների: Այս միտումներն ուժեղացան տնտեսական անկումով, որին հետեւեց օգնության եվ ներդրումների ծավալի նվազեցումը աղքատ արաբական երկրներին: Նվազեց նաեւ արտագնա բանվորների դրամական փոխանցումների հոսքը: Ծոցի հակամարտության նախօրյակին՝ 1990 թ. ամռանը արաբական բոլոր երկրներում, բացի Եգիպտոսից, եկամտի եւ աղքատության մակարդակները կամ կանգ էին առել, կամ նվազել:

Խորացող տնտեսական ճգնաժամը օգնում է ավելի տեսանելի դարձնել եւ բացատրել այն պատճառները, որոնք Ծոցի պատերազմի ընթացքում արաբական երկրներին իրար դեմ կանգնեցրեց:

Դաշնակցային ուժերի կողմին այն երկրներն էին, որտեղ տնտեսական կախվածության պարզորոշ նշաններ էին երեւում: Եգիպտոսի պարտք լինելը ԱՄՆ-ին, Համաշխարհային բանկին եւ ուրիշ միջազգային վարկատուներին, գումարած նաեւ կախվածությունը Սաուդների դրամական օգնություններից, Կահիրեին հանգեցրին միակ հնարավոր որոշմանը՝ դաշնակցել Ռիադին եւ Վաշինգտոնին:

Մարոկկոյի բազավոր Հասանի եղբայրական զգացմունքները դեպի իր Ծոցի եղբայրները երկար տարիների ընթացքում սնուցում էին Սաուդյան իշխանները, որոնք ֆինանսավորում էին Մարոկկոյի ռազմական արշավները դեպի Արեւմտյան Սահարա, ինչպես նաեւ օգնում էին դիմագրավելու Զահրի եւ Անգոլայի «համաշխարհային կոմունիզմի» ուժերին:

Ճիշտ է, դրամական հաշիվները չէ, որ գերակշռում էին Սիրիայի ղեկավար Հաֆեզ ալ-Ասադի մտքում, բայց միլիարդավոր դոլարները, որոնք արագորեն տեղափոխվեցին Դամասկոս, ճիշտ ժամանակին էին՝ ԽՍՀՄ օգնության դադարեցման պայմաններում: Ըստ երեւույթին, Դամասկոսն ավելին էր ակնկալում, եթե այսօր դժգոհում է իր բաժնից:

Լիբիա այլ էր պատկերը Հորդանանում, որը հակառակ դիրքերում էր: Այնպիսի զգուշավոր բազավոր, ինչպիսին Հուսեյնն է, ստիպված էր ընդդիմանալ ԱՄՆ-ին, որն ուներ իր լուրջ տնտեսական հիմքերը:

Հորդանանը, որպես Իսրայելի հետ ճակատային երկիր, Ծոցի երկրներից ստանում էր տարեկան մոտ երկու մլրդ. դոլարի օգնություն, ինչպես նաեւ մեծ կախում ուներ Ծոցի երկրներում աշխատող արտագնա բանվորների դրամական փոխանցումներից: Սակայն տնտեսական ճգնաժամի պատճառով 80-ականներին պաղեստինցիներն ու հորդանանցիները սկսեցին վերադառնալ աշխատանքային ճակատի կրճատման հետեւանքով, իսկ Ծոցի երկրների օգնությունը նկատելիորեն նվազեց. Սաուդներն, օրինակ, 1981 թվականի 1,25 մլրդ. դոլարի դիմաց 1989 թ. տվեցին 400 միլիոն:

Նույն ժամանակահատվածում Հորդանանը Իրաքի հետ զարգացրեց փոխշահավետ տնտեսական կապեր: Բաղդադը Ամմանին մի քանի հարյուր միլիոն դոլար տրամադրեց Ասքաբա նավահանգիստը ձեւափոխելու համար, որը Իրաքի գլխավոր նավահանգիստներից է (Քուվեյթ քաղաքի հետ միասին) Իրանի հետ պատերազմում: Տասնամյակի վերջում Իրաքը դարձել էր Հորդանանի ամենագլխավոր առեւտրական գործընկերը: Միայն մեկ փաստ. Հորդանանի արդյունաբերության 3/4-ը աշխատում էր Իրաք արտահանելու համար: Այնպես որ, Հուսեյն թագավորի ընդդիմանալը ԱՄՆ-ի քաղաքականությանը միայն պաղեստինցիների եւ հորդանանցիների հայրենասիրական զգացմունքներին համարվելը չէր, այլ մտահոգություն էր իր երկրի տնտեսական բարգավաճման համար, որը տեսնում էր Իրաքի փրկության մեջ:

1991 թ. Մերձավոր Արեւելքում իր հաղթարշավի ժամանակ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջեյմս Բեյքերը հայտարարության ձեւով մի ցանկություն հայտնեց, որ «Անապատի փոթորիկը» «Միջին Արեւելքի ամենամեծ վերջին կռիվն է»: Արեւմուտքի այսպիսի հայտարարությունները կրում են միայն ռեկլամային բնույթ եւ մեր կարծիքով իրականությանը չեն համապատասխանում: Հեռանկարներն այնքան էլ խոստմնալից չեն: Ծոցի ճգնաժամը ցույց տվեց երջանում «ճնած», բայց խոր արմատներ ունեցող այնպիսի հակամարտություններ, որ լուծության նոր փուլն իրեն ուրացնել չի տա: Պատերազմի սպառնալիքը դեռ չի վերացել:

Արաբական մի քանի երկրների օրինակով վերը նշված տնտեսական գործոնները բավական եւ առավել ես ամբողջական չեն՝ պատշաճ պատկերացում ստանալու եւ հասկանալու համար այն զարգացումը, որը հասցրեց պատերազմի եւ կանխորոշեց երկրների դաշնակցությունը հակամարտող այս կամ այն բեւին, բայց դրանք այն գլխավոր գործոններից են, որոնց հիմքում ընկած են մի շարք հարցերի պատասխանները:

ՍԱՄՎԵԼ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

## Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ պետական սահման չի հաստատվի

*«Ռուսաստանյան Դաշնության կառավարությունը որոշում է ընդունել պետական սահմանի կարգավիճակ չհաստատել Ադրբեջանի հետ»,* ասվում է Ռուսաստանի արտգործնախարարության հայտարարության մեջ, որն օգոստոսի 25-ին հրապարակել են Ադրբեջանի զանգվածային լրատվության միջոցները: Փաստաթղթում նշվում է, որ այդ մասին որոշում է ընդունվել՝ հաշվի առնելով Դաղստանի Նախարարների խորհրդի դիմումը եւ Ադրբեջանի կառավարության հետ ձեռք բերված պայմանավորվածությունները սահմանապահ զորքերի կարգավիճակի եւ նախկին ԽՍՀՄ-ի սահմանի համաձեռ պահպանման վերաբերյալ:

Փոխադարձ պայմանավորվածության համաձայն, Ադրբեջան-Ռուսաստան սահմանում կհաստատվի մինչեւ վերահսկողություն: Փաստաթղթում նշվում է, որ այդ որոշումը համապատասխանում է սահմանամերձ շրջանների բնակչության ցանկությանը եւ նպաստում է կայունության եւ հանգստության ամրապնդմանը:

Մինչդեռ, «Սնարֆ» գործակալության հաղորդագրության համաձայն, Ադրբեջանի մամլո կոմիտեի նախագահի տեղակալ Ջումշուդ Նուրիեւը հայտարարել է, թե հարավային սահմանները համատեղ պաշտպանելու մասին պայմանագիրը հակասում է Ադրբեջանի սահմանադրությանը եւ խանգարում սահմանների վերահսկողության հաստատմանը: Կոմիտեի տվյալներով, սահմանապահ զորքերի անձնակազմի միայն 20 տոկոսն են Ադրբեջանի քաղաքացիներ: ■

## Ձերբակալվել է հակահետախույզ

Ինչպես հաղորդեցին Սեւաստոպոլի կայազորի ռազմական դատախազությունից, քաղաքի ներքին գործերի մարմիններ ձերբակալել են Բալակլավայի կայազորի ռազմական հակահետախուզության բաժնի պետ, երկրորդ կարգի կապիտան Օլեգ Եւսյուկովին:

Նախնական տվյալներով, նա մեղադրվում է 1,5 հազար դոլարի կաշառք ստանալու մեջ, որն իրեն էր տրամադրել Բալթիայի երկրներին գունավոր մետաղներ վաճառող առեւտրական ֆիրմաներից մեկը: Եւսյուկովը պետք է հետաքններ այդ ֆիրմայի կողմից Ուկրաինայի օրենսդրությունը խախտելու փաստերը: Ստանալով կաշառքը, նա դադարեցրել էր հետաքննությունը, իսկ ֆիրմայի ներկայացուցիչները այդ մասին հաղորդել էին Ուկրաինայի ՆԳՆ մարմիններին եւ Սեւաստոպոլի կայազորի ռազմական դատախազությանը: ■

## Էդուարդ Շեւարդնաձեն պատգամավորության թեկնածու

Օգոստոսի 25-ին Էդուարդ Շեւարդնաձեն գրանցվել է Վրաստանի Գերագույն խորհրդի պատգամավորության թեկնածու: Նրան առաջադրել է «Մամիդոբա» (խաղաղություն) ընտրական դաշինքը:

Այդ օրն ավարտվել է կուսակցական ցուցակների հանձնումը եւ թեկնածուների առաջադրումը: Հոկտեմբերի 11-ին կայանալիք ընտրություններում պատգամավորական մանդատների համար պայքարը կշարունակեն 47 կուսակցություններ եւ հասարակական-քաղաքական միավորումներ, որոնցից 15-ը մտել են 4 քաղաքական դաշինքների մեջ:

Ինչպես «Սնարֆ»-ի թղթակցին հաղորդեցին կենտրոնական ընտրական հանձնաժողովում, Աբխազիայի, Արեւմտյան Վրաստանի եւ Հարավային Օսիայի մի քանի ընտրամասերում պատգամավորության թեկնածուների առաջադրման եւ գրանցման գործընթացը հետաձգվել է, մինչեւ այդ շրջաններում իրավիճակն ամբողջովին կայունանա: ■

## 200 վրացի պատանդ է վերցվել

Մոսկվայում Վրաստանի մշակութային ներկայացուցչության մամուլի կենտրոնի հաղորդագրության համաձայն, Աբխազիայի զինված կազմավորումները Պիցունդայում պատանդ են վերցրել 200 վրացիների: Մամուլի կենտրոնը նախազգուշացնում է, որ նման ճակատագիր է սպասվում ռուս, հայ եւ այլ ազգությունների բնակիչներին, եթե նրանք ելույթ չունենան Վրաստանի Պետխորհրդի դեմ: ■

digitised by A.R.A.R.@

# Լիբանանյան ընտրություններ. Արմատականների ազդեցության մեծացումը եւ Թեհրան-Դամասկոս մրցակցությունը

Ինչպես հաղորդել էր «Ազգ»ը նախորդ համարում, անցյալ կիրակի Լիբանանում կայացած խորհրդարանական ընտրությունների առաջին փուլում կարեւոր հաղթանակ էր տարել շիա արմատականների Հըզբոլլահ (աստծո կուսակցություն) կազմակերպությունը, պարտության մատնելով խորհրդարանի նախագահ նույնպես շիա իսլամ հանմայնի Հոսեյն Հուսեյնիի կողմնակիցների ցուցակը, որը խորհրդարանի նախագահի հրաժարականի պատճառն էր դարձել. նա բողոքում է ընտրության արդյունքների խարդախման դեմ: Հըզբոլլահի թեկնածուների ցուցակը, բաղկացած 4 շիաներից, 2 սուննիներից եւ 2 քրիստոնյաներից, խլել էր ձայների մեծամասնությունը երկրի հյուսիսարեւելյան հատկապես Բաալբեքի շրջանում:

Այս մասին «Նյու Յորք Թայմզ» թերթի Լիբանանի թղթակից Իսան Հիջազին գրում է, թե Թեհրանի աջակցությունը վայելող Հըզբոլլահի հաջողությունը արտացոլում է 16 տարվա քաղաքացիական պատերազմի հետեւանքով եւ ընթացքում տեղի ունեցած քաղաքական մեծ տեղաշարժերի պատկերը, հատկապես իրանամետ արմատականների ազդեցության մեծացումը ոչ միայն շիա իսլամների մեջ, որոնք 1.2 միլիոն են կազմում, այլեւ ամբողջ երկրում, որի 4 միլիոն բնակչությունը բաժանված է իսլամական 3 (սուննի, շիա եւ դրուզ) եւ քրիստոնեական 15 համայնքների: Սակայն թղթակիցը ոչինչ չի ասում այն մասին, որ ներկա ընտրությունների սկզբնական արդյունքները եւ հատկապես Լիբանանում սիրիական հիմնադրամներից նկատվող Հուսեյն Հուսեյնիի կողմնակիցների պարտությունը ցույց է տալիս այն խուլ եւ խոր մրցակցությունը, որը գոյություն ունի Թեհրանի ու Դամասկոսի միջեւ Լիբանանում երկար տարիներ ի վեր:

Արդարեւ, հակառակ այդ երկու մայրաքաղաքների միջեւ տիրող ամենատեսակ համագործակցությանը, մանավանդ ինչ վերաբերում է Իրան-Իրան հակամարտության ամբողջ ընթացքում Դամասկոսի հստակ կողմնորոշմանը դեպի Թեհրան, գեթ Լիբանանի հարցում Սիրիան եւ Իրանն անհաշտ մրցակիցներ են դիտվել, հակառակ երեւութական դաշնություններին: Մանավանդ վերջին ընտրությունների պարագայում, որոնք երկրի բազմաթիվ շրջաններում տեղի ունեցան Դամասկոսի կողմից հի դեղ, հավանաբար այդ նկատառումով է, որ ՀՅԴ-ի Լիբանանի Կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչները ընտրությունների նախօրյակին խորհրդարանական իրենց 4 թեկնածուներին ներկայացրել էին Դամասկոսի բարեհաճ հավանությանը, ներկայանալով փոխնախագահ Աբդել Հալիմ Խադդամին, որն իր հերթին նրանց ողարկել էր Մոխաբարաթի (սիրիական անվտանգության ծառայություն) Լիբանանի ներկայացուցիչ Դազի Քանասնի մոտ, այդ մրցակցությունն ստանում է նոր բովանդակություն եւ կարող է վերածվել բացահայտ հակամարտության, հատկապես եթե ընդգծենք տրվի ընտրությունների արդյունքը չեղյալ համարելու մասին Հ. Հուսեյնիի պահանջին:

Գաղտնիք չէ, որ Դամասկոսը Լիբանանը դիտում է որպես իր ազդեցության կենսական տարածք, ավելին՝ իր ռազմական պլացդարմն ընդդեմ Իսրայելի, որի հանդեպ պատերազմի թե խաղաղության դեղորմ սակարկության կովան է հանդիսանում սիրիական իշխանության գոյությունը Քեյրութում: Գաղտնիք չէ նաեւ, որ արաբական մյուս երկրները, Մ. Նահանգների բարձր օրհնությամբ, 1990 թ. Թաեբարձ օրհնությամբ, 1990 թ. Թաեֆի գերաստիճան ժողովում Սիրիային թույլ տվեցին առանձին տնօրինել լիբանանյան գործերը, խաղաղություն հաստատելու գործընթացը, գլխավորապես Թեհրանի ջամբած իսլամական արմատականության ծավալմանը եւ Իրանի կողմնակից գեներալ Միշել Աունի ամուսնությունը առիթ չտալու մտահոգությամբ:

Սակայն ընտրությունների առաջին արդյունքներն ավելի քան բացահայտ են դարձնում այն, որ Դամասկոսը չի կարող առանձին եւ ըստ կամս ծիավարել Լիբանանում: Առարկողները ոչ միայն քրիստոնյաներն են, որոնք բոյկոտեցին ընտրությունները, պահանջելով դրանց հետաձգումը մինչեւ սիրիական 35 հազարանոց զորքի դուրս բերումը երկրի բազմաթիվ շրջաններից (որը նախատեսված է Թաեֆի համաձայնությամբ), ոչ միայն Թել-Ավիվը, որ շարունակում է այսպես կոչված «անվտանգության գոտու» պահպանությամբ «կարմիր գծեր» դնել Սիրիայի առաջ Հարավային Լիբանանում, այլեւ, ինչպես պարզ է դառնում, Թեհրանը, որ բնավ չի բաժանվում Սաուդյան Արաբիայի փոխարեն խալիֆայության առաջատարի կոչը լինելու իր հավակնությունը:

Կրոնական թե պետական Թեհրանը բազմիցս հայտարարել է, թե ինքը եւ միայն ինքը կարող է առաջնորդել իսլամների Ջիհադը (արաբական պատերազմ) ընդդեմ Իսրայելի (որի հետ, սակայն, պահպանում է առեւտրական եւ զենքի ներմուծման ամենասերտ հարաբերություններ) եւ ազատագրել Ղոդս Էլ-Քարիֆը (արաբական Երուսաղեմ), դրա համար օգտագործելով Լիբանանի շիաներին, որոնք, ի հակադրություն ընդհանրապես սաուդամետ եւ հարուս սուննիների, Լիբանանի մեծ մասամբ բվան եւ «մազլումին» (կեղեքված) դասն են կազմում: Քաղաքացիական պատերազմից առաջ, մինչեւ 1975 թ., նրանք ոչ ազդեցություն ունեին լիբանանյան քաղաքական կյանքում, թեեւ սահմանադրությամբ միշտ նրանց է պատկանել երկրի թիվ 2 աթոռը՝ խորհրդարանի նախագահությունը:

Հետեւաբար, ազդեցության գոտիների ստեղծման եւ պահպանման դասական պայքար է, որին ականատես ենք լինում Լիբանանում: Հնչել է ճշմարտության ժամը՝ պարզելու Լիբանանում Թեհրան-Դամասկոս հարաբերությունների իսկական բնույթը: Նկատի ունենալով ամերիկյան «նոր կարգադասավորումը» (new order) եւ Վաշինգտոնում այս շաբաթ վերսկսված արաբ-իսրայելյան բանակցությունների պարագան, թվում է, թե Արեւմուտքն ու արաբական երկրների մեծամասնությունը Լիբանանում ամեն ինչ առանձին տնօրինելու նոր առիթներ կտան Դամասկոսին:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

## «Ազատություն» ռադիոկայանը պետք է փակել

«Ազատություն» եւ «Ազատ Եւրոպա» ռադիոկայաններից պետք է հրաժարվել, նրանք լավ ծառայեցին «սառը պատերազմի» տարիներին, սակայն հիմա իրավիճակն այլ է: Այսպիսին է զեկուցման հիմնական եզրահանգումը, որը հրապարակեց հանրային դիվանագիտության հարցերով զբաղվող խորհրդակցական հանձնաժողովը:

Թոմ Քրոլոգոսի՝ այն հանձնաժողովի նախագահի, որի կազմը նշանակում է Մ. Նահանգների նախագահը եւ այնուհետեւ հաստատվում սենատում, խոսքով, մյունխենյան ռադիոկայանների հետ կապված գլխավոր խնդիրների էությունն այն է, որ, նախ եւ առաջ, նրանց ծրագրերն ավելի ու ավելի են նմանվում «Ամերիկայի ձայն»ին, եւ երկրորդ, երբ նախկին ԽՍՀՄ-ում եւ այլ երկրներում, որոնց վրա սովորաբար աշխատում էին «Ազատություն» եւ «Ազատ Եւրոպա» կայանները, ժողովրդավարացման եւ սեփականաշնորհման պայմաններում առաջ են գալիս մեծ քանակությամբ տեղական կայաններ, Մ. Նահանգներին «էլ կարիք չկա ունենալ իրար հետ մրցակցող երկու ալիք»:

Նախագահական հանձնաժողովի երաշխավորությունները եւ եզրահանգումներն ինքնաստինքյան փիչ բան են նշանակում. մինչ կյանքում իրականացվելը դրանք պետք է հաստատի կոնգրեսը: Իսկ պրակտիկան ցույց է տալիս, որ կոնգրեսը մեծ ցանկությամբ չէ, որ համաձայնում է արտասահմանյան երկրների վրա ռադիո ու հեռուստահաղորդումների տահմանափակմանը: Նախագահական հանձնաժողովի երաշխավորությունների թվում են.

- Կուբայի վրա հաղորդումներ արձակող «TV-Marti» հեռուստակայանի փակումը, որը, համաձայն հետազոտությունների արդյունքների, գործնականում հանդիսատես չունի՝ հաղորդումները տրվում են նախալուսաբացի ժամին:
- Այժմյան 47 լեզուների կրճատումը, որոնցով ընթանում են «Ամերիկայի ձայն»ի հաղորդումները, եւ ազատվող միջոցների տրամադրումը նախկին ԽՍՀՄ-ի եւ Արեւելյան Եւրոպայի երկրներում տեղական ռադիոկայաններին՝ հաղորդումները պատրաստի բլոկով մատակարարելու նպատակով:
- Հրաժարվել Իսրայելում հզոր կարճալիքային հաղորդիչի հետագա շինարարությունից, որը պիտի օգտագործեր «Ամերիկայի ձայն»ը: Պատճառը՝ կարճալիքային հաղորդումների ունկնդիրների թվի խիստ կրճատումը: Տվյալ պահին «Ամերիկայի ձայն»ը եւ «Ազատություն», «Ազատ Եւրոպա» կայանները ունեն 160 կարճալիք հաղորդումներ, որոնց կեսը ուղղված է դեպի Արեւելյան Եւրոպա եւ նախկին ԽՍՀՄ-ի արեւմտյան շրջանները:
- Հեռուստատեսային գործունեության ածը, ԱՄՆ-ի կառավարական լրատվական գործակալության կողմից հեռուստածրագրերի ոլորտի ընդարձակումը, միջազգային հաղորդումների համար բյուջեի էական վերակողմնորոշումը, որում ռադիոյի բաժինը գերիշխում է հեռուստատեսության բաժնի նկատմամբ՝ 17-ը 1-ի հարաբերությամբ: ■

## Էդվարդ Շեւարդնաձեի հարցազրույցը Միջին Արեւելքի խաղաղության մասին



«Արմենիքն ինքերնեքրնը մեգեգին» ամսագրի վերջին՝ հուլիսյան համարում լույս է տեսել Այրին Մոսալլիի հարցազրույցը Մ. Նահանգների պետքարտուղարության միջինարեւելյան եւ հարավ-ասիական հարցերով օգնական քարտուղար Էդվարդ Շեւարդնաձեի հետ, միջինարեւելյան խաղաղության գործընթացի եւ Ծոցի պատերազմին հաջորդող ժամանակաշրջանի մասին: Ամերիկյան հայտնի դիվանագետը, որ երկար տարիներ դիվանագիտական տարբեր պաշտոններով աշխատել է Ամմանում, Կասաբլանկայում, Բեյրութում, Մոսկվայում եւ Դամասկոսում եւ որ քաջ գիտի անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, արաբերեն եւ հայերեն, պետքարտուղարությունում կայացած հարցազրույցի ընթացքում հիմնականում խոսում է Միջին Արեւելքում խաղաղություն հաստատելու ճիգերի, շրջանում խաղաղության հեռանկարների եւ պայմանների, ինչպես նաեւ, հակիրճ անդրադարձնելով, Հայաստանի եւ Արցախյան հարցի նկատմամբ ամերիկյան իշխանության դիրքորոշման մասին:

Խոսելով վերջին տարիների ընթացքում արձանագրված աշխարհաքաղաքական կարեւորագույն փոփոխություններին հաջորդած իրավիճակի մասին հատկապես մեր շրջաններում, ամերիկահայ դիվանագետը հաստատում է, որ վերջ է գտել Մ. Նահանգների եւ նախկին Խ. Միության միջեւ *«գրո գումարով խաղը»* (երբ երկու գերհզորները իրենց ազդեցության գոտիները պահում էին իրենց համար ոչ վտանգավոր եւ հավասար մրցակցությունների վիճակում), եւ ներկայումս Վաշինգտոնն ու Մոսկվան մեծ ջանքեր են գործադրում Միջին Արեւելքում եւ այլուր *«արդարության վրա հիմնված»* խաղաղություն եւ կայունություն հաստատելու համար:

*«Պատմական մեծ հնարավորություն»*, այսպես է բնորոշում Է. Շեւարդնաձեն Միջին Արեւելքում եւ այլուր ստեղծված խաղաղության հեռանկարները եւ խոստանում շարունակել աշխատանքը ՄԱԿ-ի թիվ 242 եւ 338 որոշումների ոգով խաղաղություն հաստատելու համար Միջին Արեւելքում: Նա պնդում է, որ իր կառավարությունը ձգտում է բաջալերել պաղեստինյան ինքնավար եւ ժամանակավոր կառավարության ստեղծումն առաջիկա մեկ տարվա ընթացքում, այնուհետեւ նոր բանակցություններով ճշտելու դրա կարգավիճակը:

Անդրադառնալով Լիբանանում հաստատված խաղաղությանը՝ Շեւարդնաձեն գնահատանքով է արտահայտվում Թաեֆի համաձայնության եւ այդ գործում Սիրիայի դրական դերի մասին, ավելացնելով սակայն, որ այդ ամենը հիմք է հանդիսանում հետեւողական աշխատանքով այդ երկրում ամբողջական խաղաղություն հաստատելու համար: Նա անդրադառնում է նաեւ սիրիահայ գաղութին՝ այն եւ հատկապես Հալեպի գաղութը որակելով «բարգավաճ եւ մեծաղես հարգված»:

Պատասխանելով մի այլ հարցի՝ Շեւարդնաձեն հայտնում է, որ անցյալ փետրվարին ինքն այցելել է Թուրքիա եւ բարձր մակարդակի խոսակցություններ, որոնց ընթացքում ստացել այն տպավորությունը, որ *«Թուրքիան անկեղծորեն ցանկանում է խաղաղ հարաբերություններ հաստատել, հատկապես տնտեսության եւ առեւտրի մեջ. Հայաստանի, Ադրբեջանի եւ Իրանի հետ»*: *«Ինձ թվում է, որ Անկարան ուզում է խաղաղություն եւ կայունություն հաստատել իր հարեւանների հետ»*, պնդում է նա: Պատասխանելով Հայաստանի, ինչպես նաեւ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի նկատմամբ Մ. Նահանգների կառավարության մոտեցումների վերաբերյալ հարցին՝ Է. Շեւարդնաձեն ասում է. *«Կարծում եմ, որ Մ. Նահանգները ցանկանում է բարեկամական եւ արդյունավետ հարաբերություններ զարգացնել Հայաստանի հետ: Նա ուզում է խաղաղ լուծում տալ Ղարաբաղի հարցին: Իրավիճակը աշխարհի այդ մասում շատ ծանր է, որի համար պետք չէ ջանք խնայել ամբողջական լուծման համար: Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա ինձ թվում է՝ նա ցանկանում է խաղաղ եւ կայուն հարաբերություններ ունենալ իր բոլոր հարեւանների հետ, ներառյալ Թուրքիայի»*: ■

## Գենադի Բուրբուլիս. Ռուսաստանը եւ Թուրքիան դեմ են արյունահեղությանը

Օգոստոսի 25-ին Ռուսաստանի պետքարտուղար Գենադի Բուրբուլիսը Թուրքիա մեկնելուց առաջ կարճատեւ զրույց է ունեցել լրագրողների հետ: Պետքարտուղարը նշել է, որ այցը հետաքրքրում է *«ինչպես խորհրդանշական, այնպես էլ միանգամայն գործնական նպատակներ»*: *«Մենք մտադիր ենք բընակել կոնկրետ հարցեր, որոնք մեծ նշանակություն ունեն երկու պետությունների տնտեսության համար»*, ասաց նա, նշելով մասնավորապես Ռուսաստանի եւ Թուրքիայի միջեւ լաստանավային հաղորդակցությունը կազմակերպելու, կնքված պայմանագրերի սահմաններում գազ մատակարարելու, ինչպես նաեւ Սեւծովյան համագործակցության մասին Ստամբուլյան համաձայնագիրը զարգացնելու վերաբերյալ նախագծերը:

*«Բացի այդ, նշեց պետքարտուղարը, մենք մտադիր ենք միասնական քայլեր ձեռնարկել Ղարաբաղում եւ Արխազիայում իրավիճակը կայունացնելու ուղղությամբ: Չնայած ինչպես Թուրքիայում, այնպես էլ Ռուսաստանում հետաքրքրում են տարբեր քաղաքական շահեր, նշեց Գ. Բուրբուլիսը, պետությունների ղեկավարները միանշանակ հանդես են գալիս արյունահեղության դադարեցման կողմ»*:

Նրա խոսքերով, Ստամբուլ կատարելիք այցի նպատակներից մեկը Ռուսաստանի նախագահի այցը Թուրքիա նախապատրաստելն է: *«Բորիս Եելցինը ձգտում է այդ այցը կատարել ընթացիկ տարում, սակայն դա շատ դժվար կլինի իրագործել»*, ասաց պետքարտուղարը:

Նույն օրը Գենադի Բուրբուլիսը Թուրքիա ժամանելուց անմիջապես հետո ելույթ է ունեցել օդանավակայանում հավաքված լրագրողների առջեւ: Նա հայտարարել է, թե Ռուսաստանից եւ Թուրքիայից մեծ քաղաքական խիզախություն եւ համաչափ քայլեր են պահանջվում Սեւծովյան շրջանի իրավիճակի կայունությունը եւ հետագայում զարգացումն աղտահոլելու համար:

Գ. Բուրբուլիսը նշել է, որ Մոսկվան եւ Անկարան հնարավոր են գտել կոնկրետ վերաբերմունք ցուցաբերել նախկին Միության եւ Թուրքիայի միջեւ հարաբերությունների դրական կողմերի նկատմամբ: Դրա հետ մեկտեղ նա հայտարարեց, որ չի կարելի սահմանափակվել միայն ԽՍՀՄ-ի օրոք կնքված համաձայնագրերով: ■

## Մոսկվայում աճել են ծխախոտի գները

Ինչպես «ԻՏ»ին հայտնեցին Մոսկվայի կառավարության գների վարչությունից, քաղաքում օրերս բարձրացել են ծխախոտի մանրածախ գները՝ «Յավա»ն՝ 14-ից մինչեւ 25 ռուբլի, «Մայրաքաղաքային»ը՝ 15-ից 27, «Կոսմոս»ը՝ 18-ից 32: Գների աճը վարչությունում բացատրեցին չարաշահումների դեմ պայքարելու անհրաժեշտությամբ: Հացի գները պահպանվում են:

Վարչությունում ասացին նաեւ, թե անցյալ շաբաթ հիմնական սննդամթերքների գները գործնականում չեն փոխվել: Անհաճ բարձրացել է կաթի գինը՝ 1 լիտրը կարժենա 13 ռուբլի: Բարձրացել են նաեւ ձավարեղենի գները: Դրանք տատանվում են 40-ից 60 ռուբլու միջեւ: ■

digitised by A.R.A.R.@

# Օլիմպիական խաղեր. Սամարանչի հեղափոխությունը



***1996 թ. օլիմպիադայում նախատեսվում են մարզիկների առավել խիստ ընտրություն, որոշ մարզաձևերի կրճատում, պրոֆեսիոնալ մարզիկների զանգվածային մասնակցություն***

Բարսելոնի օլիմպիական խաղերի ավարտի հանդիսություններն այնքան էլ փայլուն չէին, սակայն ոլորտնական անձանց օրյակում նստած Խուան Անտոնիո Սամարանչը չէր թաքցնում իր գոհունակությունը: Մարզաձևում, լողավազաններում եւ մարզահրապարակներում տեղի ունեցած երկարաբաթյա մրցումներից հետո Միջազգային օլիմպիական կոմիտեի (ՄՕԿ) նախագահը փաստորեն դարձավ 1992 թ. օլիմպիական խաղերի միակ գլխավոր հաղթողը: Երկու շաբաթ շարունակ նա դիտում էր եւ որոշ դասեր առավ ապագայի օլիմպիզմի համար:

Առաջին դասն այն է, որ այսօր օլիմպիզմի փիլիսոփայությունն ընդհանուր ոչինչ չունի 1894-ին բարոն Պիեռ դը Կուբերտենի ներկայացրած փիլիսոփայության հետ, երբ նա վերականգնեց օլիմպիական խաղերը: Մասնակիցների մեծ մասի համար սիրողական սպորտի ըմբռնումը անհետացել է, իսկ անցյալ դարավերջին Ֆրանսիացի բարոնի առաջադրած «կարեւորը մասնակցելն է» կարգախոսն այժմ թվում է ծիծաղելի եւ հնացած: Բարսելոնը դա հիշեցրեց. Ատլանտան դա կհաստատի 1996-ին: Ահա թե ինչու Խուան Անտոնիո Սամարանչը, որը եղել է ԽՍՀՄ-ում Իսպանիայի դեսպանը եւ Իսպանիայում ռինկ-հոկեյի (անվակավոր չմուշկներով հոկեյի) Ֆեդերացիայի նախագահը, օլիմպիական խաղերի ավարտից հետո վճռական դիրք բռնեց: Հաջորդ ամառային օլիմպիական խաղերում ՄՕԿ-ը մարզիկների թիվը կսահմանափակի 10 հազարով: Սամարանչը դա այսպես է բացատրում. *«Բարսելոնը ավելի քան 7 միլիոն դոլար ծախսեց օլիմպիադաների պատմության մեջ ամենաներկայացուցչական խաղերի մասնակիցներին ընդունելու համար: Ավելի քան 10 հազար մարզիկներ, 5 հազար մարզիչներ ու ղեկավարներ ներկայացնում էին 172 երկրներ»:* 1996-ին 200-ից ավելի երկրներ կլինեն եւ հազարավոր հավելյալ մարզիկներ: ՄՕԿ-ը համոզված է, որ դա կլինի անկառավարելի իրադարձություն: *«Խաղերը, շարունակում է Սամարանչը, մեծագույն իրադարձություն են, եւ մենք այլեւս չենք որոշում, որ մարզիկները դրանց մասնակցելու զան երկարաթյա արձակուրդ անցկացնելու դեպ»:* Հետեւաբար, հարկավոր է վերասահմանել օլիմպիական խաղերի ծրագիրը եւ ընտրության չափանիշները, այսինքն՝ նախապատրաստել օլիմպիական հեղափոխություն:

Այդ հեղափոխությունը տեղի կունենա Փարիզում 1994-ին, երբ ՄՕԿ-ը տոնելու է օլիմպիական խաղերի վերածննդի 100-ամյակը, եւ կիրագործվի հիմնականում արդեն 1996-ին Ատլանտայում: Արդեն նախատեսված է, որ զգալի թվով մարզաձեւեր կրճատվելու են: Արդեն փսփսում են, թե կանոնների թիավարությունը, ժամանակակից հնգամարտը, փեռագնդակը եւ խոտի հոկեյը հաստատ կրճատվելու են: Բայց ի՞նչ չափանիշների համաձայն կարող է այս կամ այն մարզաձեւը համարվել տարածված կամ չտարածված: ՄՕԿ-ի պահանջի համաձայն, մարզաձեւը պետք է կիրառվի առնվազն 75 երկրում եւ չորս աշխարհամասում: Սակայն ռինկ-հոկեյը մի՞թե օլիմպիադայում բրաուսերի մրցումներից առավել անհրաժեշտ է, լոկ այն պատճառով, որ Խուան Անտոնիո Սամարանչը երիտասարդ տարիներին ռինկ-հոկեյի լավ դարդասպահ է եղել: Մի քանի հաստատ է, որ գաղիք երկու տարիներին ազդեցության եւ լոբբիզմի պայքարը (Անգլիայի իշխանության Աննայի անվիճելի մասնակցությամբ) ծաղկելու է օլիմպիզմի հետնախորհրդում: Որոշ մարզաձեւեր նույնպես կրճատելու են իրենց ներկայացուցչությունը: Դրանցից են լողը, սուսերամարտը, ծանրամարտը, նետաձգությունը եւ «չտարածված» համարվող որոշ այլ մարզաձեւեր, որոնց շնորհիվ Ֆրանսիան այսօր ապահովում է իր մեդալների մեծ մասը: Ավելին, ՄՕԿ-ի որոշ պարագլուխներ, որոնցից է կանադացի Ռիչարդ Փաունդը, նույնիսկ պահանջում են վերացնել այնպիսի մարզաձեւեր, ինչպիսիք են առագաստանավային սպորտը կամ նժույգավարությունը, քանի որ դրանք չեն ընդգրկում մարդկային էակի բացառիկ հատկանիշները:

*«Օլիմպիական խաղերն իրենց վարկը չեն պահպանի եւ 21-րդ դարում չեն գոյատեւի, եթե չընդունեն լավագույն մարզիկներին»,* պարզաբանում է Սամարանչը: Իմաստը պարզ է, մանավանդ, որ բասկետբոլի ամերիկյան «Երազանքի թիմի» տված ներկայացումը Իրվին «Մեջիք» জոնսոնի, Լարրի Բյորդի եւ Մայքլ জորդանի գլխավորությամբ նսեմացրեց Բարսելոնի օլիմպիադայի մյուս մրցումների փայլը: Նաեւ այս պատճառով է, որ ՄՕԿ-ի նախագահը փորձում է մերձենալ հեծանվասպորտի եւ Ֆուտբոլի միջազգային Ֆեդերացիաների ղեկավարների հետ: Նա ուզում է, որ հնարավորին չափ շուտ եւ հանուն ներկայացման պրոֆեսիոնալ հեծանվորդներն ու Ֆուտբոլիստները, ամերիկյան բեյսբոլի լավագույն վարպետները եւ թերեւս նաեւ գոլֆի վարպետները մասնակից դառնան «օլիմպիական մեծ ընտանիքին», ինչպես դա արեցին այս տարի ամերիկյան բասկետբոլի եւ թենիսի միլիարդատերերը:

Ինչպե՞ս կարելի է դրան հասնել: Ըստ Սամարանչի, շատ հեշտ: Դեռ նախքան Բարսելոնի օլիմպիական խաղերն սկսվելը նա ՄՕԿ-ի անդամներին հուշեց հետեվյալ միտքը. *«Միջազգային Ֆեդերացիաներին առաջարկենք օլիմպիական խաղերի համատեղ կառավարում»:* Հիմարներ չկան, նոպատակն ակնհայտ է. Միջազգային օլիմպիական կոմիտեի նախագահը ցանկանում է լինել խաղի միակ տերը եւ առաջին հերթին նրան հետաքրքրում է այնպիսի համակարգի ստեղծումը, որը թույլ կտար յուրացնել համաշխարհային սպորտի բոլոր ֆինանսական եկամուտները: Համատեղ կառավարման այդ սկզբունքի դեղմում, օրինակ, Ֆուտբոլի միջազգային Ֆեդերացիան (ՖԻՖԱ) կողմտավորվեր աղահովել ներկայացումը, լավագույն Ֆուտբոլիստներին մասնակից դարձնել օլիմպիական մրցաշարին, ինչը կնշանակեր աշխարհի գավաթի վերջը: ՖԻՖԱ-ի ստորագրելիք բոլոր պայմանագրերը (հովանավորներ, հեռուստատեսային հեռարձակման իրավունքներ) կդատկանեին ՄՕԿ-ին:

Իր նախագահական ժամկետի նորոգումը պահանջելուց առաջ Խուան Անտոնիո Սամարանչը անդադար կրկնում է. *«Օլիմպիական ոգին գոյատեւում է, բայց ժամանակները փոխվել են: Հարկավոր է ոգին հարմարեցնել դարաշրջանին»:* Ամենք նրան մեղադրում են այն բանում, որ վաճառականներին ներս է թողել օլիմպիզմի տաճար: Նա արդարանում է, օգտագործելով վերամբարձ բառեր, ինչպիսիք են *սերը, եղբայրությունը, համընդհանրությունը:* Բարոն Պիեռ դը Կուբերտենից մեկ դար հետո նա հավակնում է լինել *«օլիմպիական խաղերի երկրորդ բարենորոգիչը»:* Եւ համոզված է, որ դրան հասնելու համար միայն մեկ ելք կա՝ հեղափոխությունը: ■

### Ատլանտայի 1996 թ. օլիմպիադայում կարող են

| Մտցվել | Հանվել | Կրճատվել |
|---|---|---|
| եռամարտ | ծանրամարտ | մարմնամարզություն |
| կարատե | ժամանակակից հնգամարտ | բռնցքամարտ |
| բեյսբոլ | կանոեներով թիավարություն | սուսերամարտ |
| ռինկ-հոկեյ | խոտի հոկեյ | լող |
| (անվակավոր | ազատ եւ հունա- | առագաստային սպորտ |
| չմուշկներով) | հռոմեական ըմբշամարտ | նժույգավարություն |
| գոլֆ | ռիթմիկ մարմնամարզություն | հրաձգարակային հեծանվասպորտ |
| | սինխրոն լող | նետաձգություն |
| | | կարաբինային հրաձգություն |

## Ոսֆով Ստեփանակերտից մինչեւ Նյու Յորք

***Այս վերնագրով «Ազգ»ի օգոստոսի 4-ի համարում տեղեկատվություն էր տպագրվել, որում մասնավորապես ասվում էր, թե Բաքու քաղաքի 60-ամյա նախկին բնակիչ Սերգեյ Մարտիրոսյանը մտադիր է Ստեփանակերտից ոսֆով հասնել Նյու Յորք: Եւ ահա նա խմբագրության հյուրն է:***

– Ծնվել եմ ԼՂՀ-ի Հադրութի շրջանի Խծաբերդ գյուղում, կյանքիս հիմնական մասն անցկացրել Բաքվում: Լուսանկարիչ եմ: Հայաստան եմ ներգաղթել 1989 թվին, բնակվում եմ Մասիսի շրջանի Հայանիստ գյուղում:

**– Ո՞րն է ձեր մտադրության դրդապատճառը:**

– Ուզում եմ այդ ճեռով համաշխարհային հանրության ուշադրությունը բեւեռել արցախյան խնդրին, դատապարտել ճնշարտությունը, հնարավորության դեպքում Ստրասբուրգում եւ այլ ունենալ Եւրախորհրդարանում, հրապարակել ԼՂՀ-ի ճանաչմանը, մի խոսքով՝ ճեղքել դիվանագիտական շրջափակումը:

**– Բայց 6500 կմ տարածությունը ոսֆով անցնելու համար ամուր առողջություն եւ ֆիզիկական լավ պատրաստվածություն է պետք:**

– Ժամանակին զբաղվում էի 3000 եւ 5000 մ վազքով, պարբերական սպորտով: Դեռ 1968 թ. 10 հոգով, այն էլ անաղատով, ոսֆով Կրասնովոդսկից հասել ենք Աստրախան, 1000 կմ-ը կտրել-անցնելով մեկ ամսում: Վստահ եմ, որ միջինը մեկ օրում կարելի է անցնել 50 կմ ճանապարհ: Այսինքն, ոսֆով Ստեփանակերտից Նյու Յորք հնարավոր է հասնել 7 ամսում: Հիմա էլ վաս մարզավիճակում չեմ: Ինձ լավ գիտեն Արտաշատի եւ Մասիսի շրջանների գյուղերում: Լուսանկարիչ եմ աշխատում եւ ճանապարհները միշտ անցնում եմ ոտքով:

**– Բայց մարզաքաղաքական ձեր գործողությունը իրականացնելու համար հսկայական միջոցներ են պետք:**

– Մոտավոր հաշվարկները ցույց են տալիս, որ առնվազն 30 հազար դոլար եւ 200 հազար ռուբլի է պետք:

Ինձ հետ պետք է լինեն մեկ վարորդ եւ մեկ մենեջեր: Ես հույս ունեմ, որ հովանավորներ կգտնվեն, որոնք կնպաստեն իրականացնելու այս կարեւոր մտահղացումը: Արդեն համաձայնություններ են բացվել. վարչությունը՝ ՀՀ «Արտկոնոմբանկ», հ/հ 67080243/00, սովորականը՝ ՊԿԲ-ի Երեւանի Սպանդարյանի բաժանմունք, հ/հ 141842, FO 511168:

**– Երբ ամեն ինչ հաջող ստացվի, ինչպիսի՞ն է լինելու ուղերը:**

–Ստեփանակերտ–Գորիս–Երեւան–Վրաստան–Կրասնոդար–Ուկրաինա–Մոլդովա (փաստորեն բոլոր տարբերը)–Ռումինիա–Հունգարիա–Ավստրիա–Գերմանիա–Ֆրանսիա–Իսպանիա–Պորտուգալիա (Լիսաբոն)–նավով Մոնրեալ եւ այնտեղից ոսֆով Նյու Յորք: Վերջնագիծը կլինի ՄԱԿ-ը: ■

Մի քանի տասնյակ տարիներ այն գտնվում էր հոլոս մենության մեջ՝ Հայաստանի պետական պատկերասրահի բակում եւ միայն անցյալ տարի նրա անդորրը խախտեց մի այլ քարե հյուր՝ Լենինի հուշարձանը: Սակայն Վլադիմիր Իլյիչը գլխատված եւ պառկած է գետնին:

Ժամանակին Եկատերինա Երկրորդի հուշարձանը տեղադրված էր Ռոստովում, այնտեղ ապրող հայության ցանկությամբ եւ նրանց հավաքած միջոցներով: Սակայն ռուս նշանավոր քանդակագործ Ալեքսանդր Օտեկուշինի քանդակն այստեղ մնաց մինչեւ այս դարի 20-ական թվականները: Նոր իշխանությունները որոշեցին նրանից մարմարե փշրանք ստանալ շինարարության համար:

Սակայն ռոստովցի հայերին հաջողվեց բազուխուն հուսալիորեն թաքցնել, իսկ այնուհետեւ տեղափոխել Լենինգրադ՝ Ռուսական թանգարան, որտեղ այն ժամանակ աշխատում էր արդեն հայտնի դարձած Սերգեյ Մերկուրովը՝ ճակատագրի բերումով այն քանդակագործը, որը Երեւանում կանգնեցված Լենինի արձանի հեղինակն է: Բավականին երկարատեւ հնարամտություններից հետո խորհրդային ականավոր քանդակագործ, մոնումենտալ քանդակագործության սյուներից մեկին՝ գյումրեցի Սերգեյ Մերկուրովին հաջողվեց 1946 թվականին արձանը տեղափոխել Հայաստան, որտեղ էլ այն մնաց մինչ օրս: Այժմ Եկատերինա երկրորդը նախատեսվում է տեղափոխվել Դոնի ափը՝ Ռոստով, որտեղի գրավի պատմության ընթացքում իրեն հատկացված տեղը: ■

## Եկատերինա երկրորդը «հեռանում է» Հայաստանից

*Ռուսական կայսրուհու մարմարե քանդակը Երեւանից փոխադրվում է Դոնի Ռոստով*

### ՄՏՔԵՐԻ ԾՈՎԱԾՈՑՈՒՄ

◆ **Ժամանակի խնայողության նկատառումով միտինգները բատերական հրապարակից տեղափոխել հացի խանութների առաջ:**

◆ **Հասարակության մեջ սովյալները անհրաժեշտ են ունեւորների ախորժակը բաց պահելու համար:**

◆ **Ըստ մեր «իշտահի», սոցիալական հարցերի մեծ մասը լուծվում է քաղախի մեջ:**

◆ **Իր սպասարկման մակարդակով մյուսներից տարբերվելու համար մի կուլտուրական առեւտրական իր ապրանքները դասել էր գրասեղանին:**

◆ **Կարմիր բանակն իր կազմից դուրս չի գա (հայ ազգին փրկելու համար):**

◆ **Արդի վիրաբուժության նվաճումներից մեկը՝ ապահովվում է կանանց բազմակուսությունը:**

◆ **Հայ ժողովուրդն այնքան անկազմակերպ է, որ մեկ շոգից է գանգատվում, մեկ՝ ցրտից: Դրան ո՞ր մի կառավարությունը կդիմանա:**

Ծովածոցում վերանորոգման կանգնած նավի կապիտան՝
ՎԱՐՈՒԺԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

### ԼՈՒՐԵՐ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

◆ Հանրահավաքներում «բոցաշունչ» ելույթների հաջաչա սպաժ ունեցող Ամբախ জամբախյանը ընտրվել է քաղաքական հոսանքների կոորդինացիոն խորհրդի նախագահ: Հաշվի է առնվել նաեւ նրա ուրախ կրթությունը: Շատ լեզուներն ասում են, թե պարոն জամբախյանն առայժմ կաշաք չի վերցնում, որովհետեւ... չեն տալիս:

◆ Հայ «այլախոհները» ճապոնական համակարգիչների օգնությամբ գուշակել են, որ կոմկուսի 30-րդ համագումարի պատվին կնկարահանվի *«Սեպտեմբերի 21. կեցցե հոկտեմբերյան հեղափոխության շարունակությունը»* գիտաֆանտաստիկ գեղարվեստական կինոնկարը: Ֆիլմը կֆինանսավորեն Բորիս Ելցինը, էլ չիբեյը, Նազարբաեւը եւ այլ պաշտոնական անձինք...

◆ Գրականագետների ուսումնասիրություններից պարզվել է, որ Խաչատուր Աբովյանի *«Օրհնվի էն սիաթը, որ ասի ոսը մեր հողը մտավ»* հայտնի արտահայտությունը վերաբերում է բացառապես իգական սեռին:

Որոշ քաղաքական գործիչներ համառորեն ձգտում են հերքել այն վարկածը:

### ԲԱՌԱՐԱՆ-ՊԱՐԱԿԱՆՈՆ

**Հումանիստ** – հում նիստեր ունեցող (օրինակ՝ կոլեգ, բիֆշտեքս, լանգետ... նախարար եւ այլն):

**Աղմուկ** – աղ կերած մուկ (այնքան խելացի, որ կարողանում է խաբել կատուներին):

**Պլեշ** – բազմաթիվ արվեստագետների (կամ այդպես կոչվածների) ստեղծագործական հավաքածու:

**Շրջապտաս** – շրջանաձեւ պտաս, որով փակում են ուրիշների ճանապարհը, յուրայիններին ուղեկցելով դեպի «փափուկ» աթոռները:

**Քոլեջ** – քոլեջու (կոռեջու) բացած էջ պատմության մեջ կամ... շրջակայքում:

**Բաց նամակ** – հայ մտավորականների հայտնագործած գերժամանակակից գենմ, որով մինչեւ վերջին ժամանակներս փորձում էին մարտնչել սպանիչ «զրադներով», հրանոթներ՝ ավտոմատներով զինված ազգի դեմ:

**Հայկական էստրադա** – անհաղթող բանաստեղծություններ հիստերիկ արտասանություն երաժշտության ուղեկցությամբ:

**Դաշնակահար** – դաշնակցությանը հարող:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

digitised by A.R.A.R.@

# Ադրբեջանը կեղծ թվական տվյալներ է բացահայտել

Երեքշաբթի օրը Բաքվում կայացած մամուլի ասուլիսի ժամանակ Ադրբեջանի պաշտպանության նախարարության լրատվական-վերլուծական կենտրոնի ղեկավար Լեյլա Յունուսովան հայտնել է, որ հայ-ադրբեջանական հակամարտության գոտում հուլիսի 19-ից օգոստոսի 24-ը ընկած ժամանակահատվածում ադրբեջանական կողմը տվել է 205 զոհ եւ 625 վիրավոր: Ռազմական տեխնիկայի կորուստները կազմել են 15 տանկ, 10 հետեւակի մարտական մեքենա, 18 զրահամեքենա, 42 հրետանային կայանք եւ մեկ ռազմական ինքնաթիռ:

Հայկական կողմը, կենտրոնի գնահատումներով, այդ նույն ժամանակահատվածում տվել է 567 զոհ: Խփվել է 30 տանկ, 30 հետեւակի մարտական մեքենա, 12 զրահամեքենա, ոչնչացվել է 18 հրետանային կայանք, 8 «Գրադ» կայանք եւ «Կամազ» մեկնիշի 19 բեռնատար:

Ասուլիսի ժամանակ ընդգծվել է, որ մարտական գործողություններին երկու կողմից մասնակցում են մոտ 20 հազար մարդ: Ըստ Յունուսովայի, ամռան երեք ամիսների ընթացքում Ադրբեջանի ինքնաղաշտպանական ուժերն «ազատագրել են» 59 գյուղ, որոնք մինչ այդ *«նվաճվել էին հայկական բանակի կողմից»*: Կենտրոնի տվյալներով, հայկական գերության մեջ են գտնվում 31 ադրբեջանցիներ, ադրբեջանականում 5 հայեր:

Ադրբեջանի հաղորդած այս տվյալների իսկությունը ղարգելու համար դիմեցինք Հայաստանի պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնին: Ինչպես տեղեկացանք այնտեղից, ադրբեջանցիները հերթական անգամ խեղաթյուրում են փաստերը՝ նվազեցնելով սեփական կորուստներն ու ավելացնելով մերը: Իրականում նշված ժամանակահատվածում ադրբեջանցիները տվել են նշվածից ավելի քան երեք անգամ ավելի զոհ, այն դեպքում, երբ հայկական կողմի զոհերի թիվը մոտ 4 անգամ մեծացված է: Ադրբեջանական կողմի զոհերի թիվը, ինչպես հայտնեցին պաշտպանության նախարարության լրատվական կենտրոնից, չի կարող 205 լինել, որովհետեւ միայն Արծվաշենի մոտ 3 օրվա ընթացքում ադրբեջանական բանակը տվել է առնվազն 150 զոհ:

Ռազմական տեխնիկայի կորուստներին վերաբերող թվերը նույնպես խիստ աղավաղված են: Օրինակ, ադրբեջանական բանակը նշված ժամանակահատվածում կորցրել է 30 տանկ, մինչդեռ հայկական կողմն այդպիսի կորուստներ չունի: Բացի այդ, հայկական ինքնաղաշտպանական ուժերի կողմից խփվել է ոչ թե մեկ, այլ երկու ինքնաթիռ:

Մի խոսքով՝ Ադրբեջանի պաշտպանության նախարարության բացահայտած տվյալներն իրականում վկայում են այն մասին, որ Ադրբեջանը միջոցների միջեւ խստականություն չի դնում սեփական բանակի հարուածն կորուստները թաքցնելու, ժողովրդի ոգին արհեստականորեն բարձրացնելու եւ միջազգային հանրության առաջ տանիրոջ վստահելի կեցվածք ընդունելու համար: Այս վերջին աղաստեղեկատվությունը պարզապես տրամաբանական շարունակությունն է այն լրատվական քաղաքականության, որը որդեգրել եւ համառորեն իրականացնում է Ադրբեջանը՝ սեփական ժողովրդի աչքին ավելի ու ավելի բարձրացնելով իր բանակի հեղինակությունը:

ԱՐՍԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

# Նորի՞ց հայ ահաբեկիչներ

Ինչպես երեկ հաղորդեց «Սնարֆ» գործակալությունը, համաձայն Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության տվյալների, առաջիկայում Բաղդադի ռուսաստանյան դեսպանության ադրբեջանցի աշխատակցի կնոջ եւ դստեր սպանությունների հետաքննության աշխատանքներին կմասնակցեն ավելի իրավասու մարմիններ: Ազգային անվտանգության նախարարության վարկածի համաձայն, ահաբեկչական այդ գործողությունն իրականացրել է Իրաքի մայրաքաղաքում գործող հայկական ահաբեկչական կազմակերպությունը:

Ինչպես տեղեկացանք Հայաստանի ԱԳՆ-ից, որեւէ հայկական ահաբեկչական կազմակերպության մասնակցությունը բաղդադյան սպանություններին պարզապես բացառվում է այն պարզ պատճառով, որ վաղուց ի վեր նման կազմակերպություն չի գործում:

Ինչպես երեւում է, դարձ գալով միջազգային ասպարեզ, Ադրբեջանը որդեգրում է իր հովանավորի՝ Թուրքիայի հակահայ քարոզչական քաղաքականությունը: Բայց Թուրքիայի բողոքները գոնե հասցեատեր ունեին՝ ԱՍԱԼԱ-ն: Ո՞ւմ դեմ է պայքարելու Ադրբեջանը: ■

# Լուրերի Դոսք

## Դուդաեւը ուխտի գնաց

Չեչնիայի նախագահ Ջոխար Դուդաեւը երկուշաբթի օրն ավարտեց չորսօրյա այցը Սաուդյան Արաբիա եւ Քուվեյթ, որի ընթացքում ուխտի գնաց Մեքքա: Նախագահի մամուլի ծառայության տվյալներով, բանակցությունների ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել այն մասին, որ Չեչնիան ընդունվի մուսուլմանական երկրների լիգա: ■

## 10 կգ միս առանց մախսատուրքի

Լիտվայում ուժի մեջ են մտել նոր մախսային օրենքները: Այսպես, մեկ անձն առանց մախսատուրքի կարող է արտահանել 10 կգ միս, 5 կգ ձուկ կամ կոնֆետ, 1 կգ շաքար, պանիր, կարագ, 0,5 կգ աղ եւ թեյ, երկու տասնյակ ձու: Կարելի է ազատ տեղափոխել ժառանգած գույքը եւ վերջին 30 տարիների ընթացքում ստեղծված մշակութային արժեքները:

Չեղյալ են համարվում ազատ փոխարկելի արժույթի ներմուծման հետ կապված բոլոր սահմանափակումները: ■

## Նորօրյա ավազակապետը

Ինչպես հաղորդեց Ադրբեջանի մամուլը, ձերբակալվել է Ժողովական տի Ջալիլաբադի բաժանմունքի նախկին ղեկավար Միրզին Բահրամովը: Նա գլխավորում էր մի հանցագործ խմբավորում, որը տարբ էր գանձում Իրան ճանապարհվող եւ այնտեղից վերադարձող «վաճառականներից»: ■

## Անկասելի կամավորներ

Ինչպես հաղորդեցին «ԻՖ»ին կամավորական շարժումը կոորդինացնող շտաբում, Կովկասի լեռնային ժողովուրդների համաշխարհության կամավորների հերթական խումբը օգոստոսի 25-ին Գրոզնիից մեկնել է Աբխազիա: Վլադիկավկազի մոտ նրանց ավտոբուսները գնդակոծվել են եւ մեքենաներից մեկը շարից դուրս եկել: Կամավորները բռնագրավելով մեկ այլ ավտոբուս շարունակել են իրենց ճանապարհը: Պյաթիգորսկում նրանք պատանդ են վերցրել քաղաքապետին, հասել Չերկեսկ եւ այնտեղից լեռներով անցել Աբխազիայի տարածք: ■

## 168 ռուբլի 1 դոլարի դիմաց

Մոսկվայի միջբանկային արժութային բորսայի օգոստոսի 25-ին կայացած սակարկության ժամանակ դոլարի կուրսը կազմել է 168 ռուբլի: Վաճառվել է 27,68 միլիոն դոլար:

Օգոստոսի 20-ին կայացած նախորդ սակարկության ժամանակ վաճառվել էր 27,3 միլիոն դոլար հետեւյալ կուրսով 162,6 ռուբլի մեկ դոլարի դիմաց: ■

*Լուրերը՝ Interfax-ի, «Սնարֆ» եւ մեր թղթակիցների*

# Աբխազիայում հայերը չեզոքություն են պահպանում

«Ինտերֆաքս» լրատվական գործակալությունից ստացվեց հետեւյալ տեղեկությունը. *«ՀՅԴ ՄԿԿ-ն հաղորդել է, թե Աբխազիայի հայկական համայնքը Լեւոն Տեր-Պետրոսյանին եւ ՀՀ Գերագույն խորհրդին զգուշացրել է, որ Աբխազիայում բնակվող 100 հազար հայերի առջեւ ֆիզիկական ոչնչացման կամ բռնագաղթի սպառնալիք է ծառացել:*

*Աբխազիայի հայ համայնքը կոչ է արել հայկական ջարդերը եւ բռնագաղթը կանխելու բոլոր ձեռնարկել»:*

Լարը ճշելու նպատակով կազմվեցին հանրապետության նախագահի մամուլի ծառայության քարտուղար Ռոբերտ Շուգարյանի հետ, որը հաղորդեց հետեւյալը. «Լեւոն Տեր-Պետրոսյանը Աբխազիայի համայնքից ոչ մի դիմում չի ստացել: Սակայն անկախ այդ հանգամանքից, նա ճշտական կապ է պահպանում Վրաստանի եւ Աբխազիայի ղեկավարների հետ: Մեր ունեցած տվյալներով, Աբխազիայում սպանվել է երկու հայ եւ ոչ թե տասնյակներ, ինչպես գրել են Հայաստանի որոշ թերթեր: Տեղեկություն է ստացվել նաեւ աբխազահայ հայտնի գործիչ Տիգրան Ծատուրյանի ձերբակալության մասին, բայց այս լուրը լրացուցիչ ճշտման կարիք ունի: Հայերի նկատմամբ եւս բռնություններ են կատարվել, բայց դրանք զանգվածային բնույթ չեն կրել: Ընդհանուր առմամբ, Աբխազիայի ռուսական եւ հայկական համայնքները չեզոք դիրք են գրավել: Ինչ վերաբերում է Աբխազիայից ստացվող լուրերին, դրանք գալիս են այդ հանրապետության պաշտոնական աղբյուրներից

# Որպես մարդ աբխազ ժողովրդի կողմն եմ

Խոսելով Աբխազիայի հակամարտության հանդեպ իր վերաբերմունքի մասին, Չեչենական հանրապետության նախագահ Ջոխար Դուդաեւը հայտարարեց, որ որպես մարդ նա ամբողջովին աբխազ ժողովրդի կողմն է, իսկ որպես նախագահ պետական մակարդակով մտադիր չէ միջամտել այդ ներքին կոնֆլիկտին: Դուդաեւի կարծիքով, հակամարտության պատճառն այն է, որ Վրաստանը վերադարձել է 1921 թ. սահմանադրության դրույթներին: Այդ ժամանակ Աբխազիան Վրաստանի կազմի մեջ չէր, ուստի հայտարարեց իր ինքնիշխանության մասին: Շեւարդնաձեն չհավանեց այդ քայլը:

Ինչ վերաբերում է Աբխազիա մեկնող Կովկասի լեռնային ժողովուրդների համաշխարհության կամավորներին, Դուդաեւն ասաց. *«Դա ամեն մարդու խղճի եւ ինքնագիտակցության գործն է»:* ■

# ՌԱՄ-ը պահանջում է Շեւարդնաձեին զրկել քաղաքացիությունից

Ռուսական ազգային միության (ՌԱՄ) համանախագահ, ՊԱԿ-ի նախկին գեներալ Ալեքսանդր Ստերլիգովը տարակուսանք հայտնեց, թե Եդուարդ Շեւարդնաձեն Ռուսաստանի քաղաքացի է, գրանցված է Մոսկվայում եւ ամառանոց ունի Մոսկվայի մոտ: Ռուսաստանի նախագահին եւ ԳԽ նախագահին ուղղված բաց նամակում Ա. Ստերլիգովը կարծիք է հայտնել, թե այդ փաստերը վկայում են, որ *«Ռուսաստանը, ի դեմս Շեւարդնաձեի քաղաքացիության, չհայտարարված պատերազմ է մղում Աբխազիայի ժողովուրդների դեմ»*: *«Ռուսական ազգային միությունը պահանջում է 24 ժամվա մեջ Շեւարդնաձեին զրկել քաղաքացիությունից, մոսկովյան գրանցումից եւ վռնդել մեր պետությունից»*, ասվում է նամակում: ■

# Գորբաչովի ելույթը սադրանք է

Ինչպես հաղորդեց «Սնարֆ»ը, էստոնիայի վարչապետ Տիյս Վյախին սադրանք է համարել Միխայիլ Գորբաչովի հարցազրույցը Ֆինական «Վասաբլադես» թերթում: ԽՍՀՄ նախկին նախագահը նշել էր, թե Ռուսաստանի զորքերը պետք է մնան Բալթիայի երկրներում իրավիճակը կայունացնելու եւ ռուսալեզու բնակչության նկատմամբ խտրականություն թույլ չտալու նպատակով: Էստոնիայի վարչապետը գտնում է, որ Գորբաչովը տեղի է տվել փոխհատուցման ծրագրող աջակողմյան հեղափոխական ուժերին, որոնք ձգտում են օգտագործել: ■

CEMA
CENTRE DE MANAGEMENT D'ARMENIE
ՀՀ առեւտրաարդյունաբերական պալատը եւ ֆրանսիական «ԺԻԱ» հայկական միջմասնագիտական միությունը
տեղեկացնում են, որ 1992 թ. սեպտեմբերից իր ուսումնական երկրորդ տարին է սկսում Հայաստանի Մենեջմենթի «Սեմա» կենտրոնը, որի խնդիրն է պատրաստել մենեջմենթի բնագավառի կադրեր:
Դասախոսությունները բաղկացած կլինեն 13 մոդուլներից, յուրաքանչյուրը մեկ շաբաթ տեւողությամբ: Դասընթացները առաջարկվում են սինխրոն բարգմանությամբ: Դասընթացները կանցկացնեն Ֆրանսիայի փորձառու մասնագետները: ՍԵՄԱ կենտրոնը ձեր ուշադրությունն է հրավիրում այն փաստի վրա, որ ուսումնական տարվա վերջում դասախոսությունների ողջ ընթացքին մասնակցած ունկնդիրներին կընձեռվի հիանալի հնարավորություն մեկնել Ֆրանսիա վերապատրաստման: Հիշեցնում ենք նաեւ, որ «ՍԵՄԱ» կենտրոնին կից գործում են Ֆրանսերենի դասընթացներ:
Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել 56 51 94, Հայաստանի Հանրապետության Առեւտրաարդյունաբերական պալատ: Հասցեն՝ Հանրապետության 39

# Գազամուղը Թուրքմենստանից երեք տարում կհասնի Թուրքիա

Օգոստոսի 25-ին ավարտվել է Թուրքմենստանի նախագահ Սապարմուրատ Նիյազովի պաշտոնական այցը Իրան: Բանակցությունների ժամանակ որոշում է ընդունվել ավարտել Թուրքմենստան-Իրան-Թուրքիա գազամուղի կառուցումը 2-3 տարում: Այդ մասին «ԻՖ»ին հաղորդեց Թուրքմենստանի փոխվարչապետ Նազար Սույունով: Նրա խոսքերով, գազամուղի թողունակությունը կլինի տարեկան 28 միլիարդ խորանարդ մետր գազ:

Ս. Նիյազովի այցի արդյունքներով կազմակերպված կոմյունիկեում նշվում է, որ «խորացված խորհրդակցություններ» են տեղի ունեցել նաեւ Թեջեն-Սարախս-Քիշֆեկ երկաթուղու կառուցման, ինչպես նաեւ համատեղ բանկային գործունեության մասին նախագծերի իրականացման վերաբերյալ: Քննարկվել են երկու երկրների քաղաքացիների միջեւ շփումների ընդլայնման եւ սահմանի հեշտացված անցման հետ կապված հարցերը: ■

Ազգ
Հիմնադիր եւ հրատարակիչ «Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Գլխավոր խմբագիր ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ
Խմբագիր ՀԱՄԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ
Տնօրեն ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ
52.16.35 գլխ. խմբ.
58.18.41 խմբագիր
56.28.63 տնօրեն
Apple Macintosh համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Azg Bi-daily, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010
Editor H. AVEDIKIAN
ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Երեւան-23, Արշակունեաց 2
Գրանցման թիւ 65
Տպաքանակ 20 000
Դասիլ 69149
Պատուէր 1531
Ստորագրուած է տպագրութեան 26.08.1992

digitised by A.R.A.R.@